


Superscript
6/4/68 by Capt
to the General

47.925)

- 33

W 251

~~2784~~
~~2085~~



2085

2085

2085

2085

2085

2085

2085

2085

10, 9X

9(47.925)

Σ-33

me

ԼԷՄԱՆ ՀԱՌԻՊՏ

31 AUG 2007

ՀԱՅԱՍՏԱՆ

ԵՐԲԵՐՆ ԵՒ ԼՅԺՄ

ՀԱՏ. I



ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Գերմաներէն ընազրից թարգմ.

ԻՍԱՀԱԿ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

ԱՐՏԱՏՊՈՒԹԻՒՆ «ԱՐՕՐ»-ԻՑ



ԹԻՖԼԻՍ

Տպարան «ԷՊՕԽԱ», Գանովսկայա, № 3.

1910

1004
1904
1

8

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

ՃԱՆԱԳԱՐՀՈՐԴՈՒԹԵԱՆ ՀԱՐԺԱՌԻԹՆ ԵՒ
ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ



Հայաստանն ու հայերը սովորական մտքով:—Այժմեան դրուժեան սլատմա-
կան պայմանները:—Պաղեր կամ Ուրարտացիները:—Նախահայկական ան-
ցեալի և ներկայի մէջ եղած սերտ կապը:—Հին հայկական տեղեկութիւն-
ներ երկրի վաղեմի հնութիւնների մասին:—Փր. Էդ. Շուլցի ճանապարհոր-
դութիւններն ու մահը 1828/29:—Վ. Բէլքի առաջին ճանապարհորդութիւնը
1891:—Հայաստանի սլատմութեան համառոտ տեսութիւնը:—Գէպի Հայաս-
տան ճանապարհորդելու համար կազմված գերմանական էքսպեդիցիօնի
նպատակները, միջոցներն ու արդիւնքները 1898/99:—Ճանապարհորդու-
թեան ընթացքը:—Գրքիս ներածութիւնը:

Հայաստանը քիչ հետադուստլած *) երկիր է, թէև նրա մասին այսօր, ինչպէս նաև անցեալում, շատ է խօսվել: Յայտնի է, որ այդ երկիրն անմարդաբնակ լեռներով կտրատված բարձրաւանդակ է, բայց ընդհանրապէս յայտնի չէ, որ այդ լեռները պարփակում են ընդարձակ, մշակելու յարմար և փոքր խնամքով բարեբեր դարձող հարթավայրեր: Հայերին պատահում են արդի հաղորդակցութեան շատ կենտրոններում—Կօստանդնուպօլսում, Չմիւռնիայում, Եգիպտոսում. լսում և փորձով էլ իմանում են, որ նրանք ճարպիկ, առած դարձած խորամանկութեամբ ու յաճախ էլ համապատասխան անխղճութեամբ օժտված վաճառականներ են. և այս՝ իրանց երկրից դուրս գտնվող՝ ցրված, օտարացած գաղթականներով են հայերի մասին շուտափոյթ գաղափար կազմում ճանապարհորդները, ժուրնալիստները, հնագէտները և, տարաբախտաբար, ոչ միայն նրանք:

Միայն շատ քչերին է յայտնի, որ բուն Հայաստանում գերակշռող թիվ են կազմում երկրագործները, որ հայ գիւղացին զգաստութեամբ, աշխատասիրութեամբ և սակավապետութեամբ իր հողն է մշակում. հայ գեղջուկը՝ սիրելով իր ծննդա-

*) ժամօթ, Արտատպուեած լինելով «Արօրից», Վ-ի ուղղագրութիւնը
 քննում է նորինը, եւ գրում եմ «ու»:
 Իս. Յ.:

վայրը՝ կպած է մնում հողին նոյն իսկ այն արտաքոյ կարգի հանգամանքներում, երբ քրդական յափշտակամոլութիւնն և թիւրքական կամայականութիւնն ամեն ինչ խլում են նրանից, երբ նրա կեանքն ամեն րօպէ վտանգի մէջ է: Այս բոլորը դիտեն միայն այն սակավութիւլ անձինք, որոնք լուրջ կերպով և իրապէս ճանապարհորդել են Հայաստանում. սրանց ջանքով պէտք է վերոյիշեալ արմատացած նախապաշարմունքը վերանայ:

Ավելի սակավ ծանօթ են այն պատմական նախընթաց դէպքերն ու պայմանները, որոնց հիման վրայ զարգացել են այժմեան հանգամանքները: Հայերի քրիստոնեայ լինելը յայտնի է դարձել ընդհանրապէս՝ վերջին տասնհինգ տարվայ ընթացքում տեղի ունեցած, անհուն կերպով ողբալի դէպքերի տխուր տեղեկութիւններով: Բայց շատ քչերը գիտեն, որ բոլոր երկրներից առաջ Հայաստանն է ընդունել քրիստոնէութիւնն իբրև պետական կրօն. այդ տեղի ունեցավ երրորդ դարում, մինչդեռ Հռոմէական պետութեան մէջ միայն չորրորդ դարում, Կոստանդինի ժամանակ, քրիստոնէութիւնը ճանաչվեց իբրև պետութեան կողմից թոյլատրված կրօններից մէկը:

Ամեն մի պիմնադիստի քաջ յայտնի է, որ—ավելի հին ժամանակները յիշելով—հայոց թագավոր Տիգրանը, իբրև պօնտացի մեծ Միհրդատի դաշնակից, հռովմայեցոց առաջ դժվարութիւններ յարուցեց, որ երեքուկէս դար դրանից առաջ տասնհազար յոյներ Բաբելոնից հայրենիք նահանջելիս՝ Հայաստանի միջով անցան ձմեռ ժամանակ, մինչև որ բազմատեսակ նեղութիւններով Սև ծովի ափերը հասան: Բայց որ Լիդիայի արքայ Ալիատէսի և Մարաստանի թագավոր Կիաքսարի մէջ տեղի ունեցած պատերազմը,—որ հին աշխարհի քաղաքական ու քաղաքակրթական զարգացման համար մեծ նշանակութիւն ունեցավ և Հալիսի ճակատամարտով յօգուտ Մարաստանի վճռվեց (585 թ. Ք. ա.)—իսկապէս Հայաստանի տիրապետութեան համար էր, հազիւ թէ պարզ լինի նոյն իսկ նրանց համար, որոնք լավ գիտեն այդ իրողութիւնները և դրանց հետևանքները:

Գերմանիայում այժմ ընդհանուր հետաքրքրութեան առարկայ դարձած խնդիրների շարքում առաջնակարգ տեղ է բռնում Միջագետքի հին քաղաքակրթութիւնը և նրա նշանակութիւնը մարդկութեան զարգացման համար, որ երկար ժամանակ անպատահաբար անուշադիր էր թողնված: Իրավացի կերպով կարելի է կասկածել՝ թէ արդեօք իրանց հայնացքը

դէպի Բաբելոն ուղղողներից շատերն են հարց տվել՝ թէ արդեօք ինչ վիճակ ունէր այդ քաղաքակրթութեան ծաղկման շրջանում Եփրատի և Տիգրիսի ակունքների շրջակայ երկիրը, որ Հայաստան ենք անվանում: Եվ քչերի համար պարզ կլինի, թէ ինչպէս հէնց այդտեղ միմեանց հետ հիւսվում են ամենահին աշխարհակալութիւնները և այժմեան ամենանոր ձգտումները: Բաբելոնը, աշխարհիս առաջվայ ամենաբարեբեր երկրներից մէկը, ցանկալի էր նոր ծաղկման հասցնել: Այդ նպատակին հասնելու պայմանները պէտք է լինին՝ տեղական ամենահին ջրահաման, ոռոգման և ջրանցքային սիստեմի վերականգնելը, եթէ նոյն իսկ արդի տեխնիկան չուտով հին աշխարհում յայտնի եղածին գերազանցէ: Սակայն այնտեղ, ինչպէս արդէն Հերոօտը ճիշտ նկատել է, գետերի հոսանքների մեծանալը զարնան ժամանակ պայմանավորվում է հայկական լեռների ձիւնի հալչելով. այդ պատճառով անհրաժեշտ է գետերի վերին հոսանքները կանոնավորել: Այստեղ առաջադրված մեծ խնդիրների իրագործման համար, իբրև սքանչելի նախատիպ, կարող են պէտք գալ այն լեռնային ջրմուկները, ջրանցքները և ջրաբաշխումները, որ հնարել էին հայերից առաջ Հայաստանում բնակվող խալդերը կամ թէ, ինչպէս ասորեստանցիներն անվանում են իրանց քաղաքական հակառակորդներին — ըստ քաղաքակրթութեան՝ մասամբ իրանց ուսուցիչներին, մասամբ նաև աշակերտներին—Ուրարտացիները, որոնց պետութիւնը ծաղկման ամենաբարձր շրջանում էր գտնվում 800 տարի Ք. ա:

Խալդերի թողած հետքերով Հայաստանի մէկ ծայրից մինչև միւսը ճանապարհորդողը—ինչպէս ինձ վիճակվեց—առանց որոնելու և կամենալու կտեսնի այն մեծ կապը, որ գոյութիւն ունի ամենահին անցեալի և նորագոյն ներկայի մէջ: Այնտեղ կարիք չկայ, որ ամենահին ժամանակները վերակենդանանան, քանի որ դրանք կենդանի կերպով շարունակվում են և մեր օրերում: Միջագետքում հին ջրանցքները վաղուց արդէն ծածկվել են ավազով ու տղմով, իսկ խալդերի շինածները դեռ այսօր էլ ծառայում են իրանց սկզբնական նպատակին, այսինքն ոռոգում են բարեբեր դաշտերը և դրանց կենտրոնն ու պատվարը կազմող քաղաքներին խմելու ջուր են մատակարարում: Քաղաքներն էլ այնպէս ավերակ, քարուքանդ չեն և անպատի ավազով ու տափաստանի խոտերով ծածկված փլատակների բլուրներ չեն ներկայացնում, ինչպէս Միջագետքում, այլ դեռ այսօր էլ կանգուն են մեծ մասամբ այն-

տեղ, որտեղ հիմնվել են նախահայկական զօրեղ տիրապետող-
ների ձեռքով: Խալդեերի ժայռաբերդերն էլ իբրև ամբողջ են
ծառայում—համեմատաբար—արդի պաշտպանողական նպա-
տակներին: Նոյն իսկ նրանց արքաների սեպագրերը բացա-
ռապէս միայն՝ մեռած, անհասկանալի հնութիւններ չեն, այլ
գեր են խաղում այժմեան բնակիչների կեանքում և հավատի
հարցերում: Ժայռերի վրայ փորագրված սեպագրերն և այն
խորշերը, որտեղ յաճախ պահված են լինում արձանագրու-
թիւնները, համարվում են նվիրված հին, ժողովրդի հավատից
դեռ ևս չանյայտացած, աստվածներին, կամ թէ դրանց մէջ
պահված են կախարդված գանձեր: Իսկ խալդական սիւնաձև
կոթողները, որոնք նման են մեր, վերևից կլոր ձև ունեցող, դե-
րեզմանաքարերին, շատ յաճախ պատահում են քրիստոնէական
եկեղեցիներում. դրանք իբրև սեամք, դարավանդներ (simse),
անկիւնաքարեր կամ թէ բեմի առաջը պատի մէջ դրված՝
կազմում են այժմեան հայերի եկեղեցիների նշանավոր բաղ-
կացուցիչ մասը: Առանձին ձև ունեցող մեծ խաչերի ունեցած
(խաչերի մեծութիւնը յաճախ ի ֆրաս դրանց շուրջն եղած
դրվածքի է լինում. խաչերը հայերի համար Քրիստոսի աղբա-
նշանն են դարձել) հմայքը փոխվել է օրհնութեան, երբ
դրվել են պատերի մէջ: Եվ եթէ դրանք այդպիսով իմաց են
տալիս մեզ, որ այժմեան քրիստոնէական տաճարի տեղը կամ
անմիջական շրջակայքում երբեմն եղել է խալդական պաշտա-
մունքի վայր, որտեղ և դրված էր կոթողը, ապա հաստատվում է
այդպիսով Հայաստանի վերաբերմամբ եղած այն ընդհանուր
գիտողութիւնը, որ կրօնական պաշտաման տեղերը, մինչև ան-
գամ առարկաները կամ արտաքին նշանները մնում են նոյնը,
եթէ կրօնը նոյն իսկ մի քանի անգամ փոխվում է: Թէ հին և
թէ նոր նախապաշարմունքով է հիւսված ամենահին ժամանակի
վկայ հետեւել իրողութիւնը, որ պարզ գեղջուկի համար
անհասկանալի է. քրդերի ավերածութիւնների ժամանակ քա-
րուքանդ եղած մի եկեղեցու սեամքի տեղ ծառայող հին կո-
թողն այժմ համարվում է գիւղի հացն ապահովող թալիսմանը:

Ամենահին ժամանակների ներկայի հետ կապակցվելը,—
որ դիտված և ընդունված է ուրիշ երկրների նկատմամբ ևս—
տեղի է ունեցել մեծ մասամբ շնորհիվ այն կենդանի, թէև ան-
գիտակից, հասկացողութեան, որ ունեցել են սկզբնական հայ
եկվորները տեղական քաղաքակրթութեան մասին, որ գոյ-
ութիւն է ունեցել իրանցից առաջ և որի առաջացնողներին
իրենք ընկճել են (600 թ. Ք. ա.): Հայկական ավանդութիւնը,

—որ հասել է մեր ձեռքը՝ վաղագոյնը վեցերորդ դարի (Ք. յետոյ)
դրվածքներով, սակայն բնականաբար շատ ավելի հեռավոր
ժամանակներից է ծագում,—խալդերի արածներն ու գործերը
իր նախնիքներին է վերագրում: Հարկավ դրա հետ միասին
գերեր են տրվում ասորեստանցիների առասպելական անձնա-
վորութիւններին՝ Բելին ու Շամիրամին. երկրի և նրա հնագոյն
բնակիչների՝ ասորեստանցիների հետ ունեցած պատերազմա-
կան և քաղաքակրթական շփումների յիշողութիւնները մոռա-
ցութեան չէին տրվել: Այդ յիշողութիւնները մինչև Տիգրան
«մեծ»-ի ժամանակները կենդանի էին:

Այստեղ ևս, ինչպէս և հետագոտութեան այլ շրջաններում,
ասպացուցվում է նորից, որ հին արեւելեան և կլասիկ պատմա-
կան ժամանակաշրջանների միմեանցից բաժանելը ոչ կարելի
է և ոչ էլ ցանկալի: Եւ այսպիսով թող թոյլ տրվի ինձ ևս
նախօրօք շեշտելու ընդհանրապէս այն, ինչ որ, յոյս ունիմ,
դրքիս բովանդակութիւնը կհաստատէ մանրամասն: Ես ճանա-
պարհորդել եմ ոչ իբրև արեւելագիտական շրջանի մասնագէտ,
այլ իբրև պատմաբան, որի հետագոտութեան շրջանն է յատ-
կապէս ամբողջ հին պատմութիւնը մինչև հռոմէական վեր-
ջին և բիւզանդական սկզբի ժամանակները. այդ պատճառով
մս չեմ կարող ավելի պակաս ուշադրութիւն դարձնել կլասիկ
հին պատմութեան ժամանակաշրջանների վրայ, քան ավելի
հնագոյնների. ես աշխատում եմ ներկան ըմբռնել իբրև հե-
տեանք պատմական անցեալի և այդպիսով ոչ կարող եմ և ոչ էլ
կամենում եմ հրաժարվել նաև Միջին և նոր դարերի դէպքերն
ու հանդամանքները կշռադատելուց:

Միւս կողմից չէ կարելի ժխտել այն ճշմարտութիւնը, որ
քանի յետ ենք գնում, այնքան ավելի նշանավոր է հանդիսա-
նում Հայաստանի համաշխարհային պատմական դերը՝ արտա-
քին քաղաքականութեան ընդհանուր զարգացման պատմական
շրջանակում. կարելի չէ ժխտել նաև այն իրողութիւնը, որ
այստեղ նկարագրված գիտական ճանապարհորդութիւնը վե-
րաբերում է գլխավորապէս խալդական ժամանակի լուսաբա-
նութեանը և որ խալդերի պատմական կեանքը տեղի է ունե-
ցել հայկական հողի վրայ:

Եվրոպական գիտութեան հետաքրքրութիւնը «հայկական»
հնագոյն ժամանակի վերաբերմամբ համեմատաբար շուտ է
առաջացել. սակայն հետագոտութիւնը, խոստմնալի սկզբնա-
վորութիւնից յետոյ, երկար ժամանակ ընդհատվել է, որպէս զի
մեր օրերում նորից ընթացք ստանայ:

Իրանց ազգի պատմութեամբ զբաղվող հնագոյն հայկական հեղինակները ամենահին ժամանակների արարչագործութիւնները շարունակ այնպէս են յիշատակում, որ յայտնապէս իրանց են աչքի առաջ ունեցել և նկարագրել են իրանց սեփական տեսութեամբ: Այդպիսի հատուածներից ամենանշանաւորը առաջ եմ բերում «Հայոց պատմութեան» առաջին գրքի տասն և վեցերորդ գլխից: «Հայոց պատմութիւնը» կրում է հինգերորդ դարում ապրող Մովսէս Խորենացու անունը, սակայն հավանականաբար մի քանի դար յետոյ է հեղինակվել. ահա այդ հատվածն ազատ թարգմանութեամբ:

«Աղի ծովակի (Վանայ լիճը, որտեղ իրապէս գտնվում է այժմեան Վան քաղաքը, խալդական պետութեան երբեմնեայ մայրաքաղաքը, իր հրաշալի, լեռան առանձնացած թիկունքի կենդանի ապառաժի մէջ կոփված կճակրեայ ժայռաշէնքերով) արեւելեան կողմը Շամիրամը հիմնել է մի քաղաք և քաղաքի համար ջրանցք է շինել. «նա հրամայում է նախ շինել գետի ամբարտակը ապառաժիկերով և խոշոր քարերով մեծ լայնութեամբ և բարձրութեամբ, որ, ինչպէս ասում են, հաստատ կայ մինչև այսօր: Եւ այն ամբարտակի ճեղքերի մէջ այժմ, ինչպէս լսում ենք, փախչում ամրանում են այն աշխարհի բնակիչները ավազակներից ու հէներից, որպէս թէ ամրացած լինէին սարերի քարանձավների մէջ: Եթէ մէկը փորձելու լինի այն ամբարտակի շինութիւնից պարստակի մի քար անգամ հանել՝ չի կարողանայ, որչափ մեծ աշխատանք էլ գործ դնէ: Քարերն այնպիսի ճարտարութեամբ են միմեանց հետ կապակցված, որ նայողը կկարծէ, թէ մոմով են միմեանց հետ կցված: Եւ այսպէս շատ ասպարէզներ երկարութիւն ունեցող ամբարտակը հասցնում է մինչև քաղաքի համար նշանակված տեղը»:

Մենք կտեսնենք, որ այս հնագոյն տեխնիկայի հրաշալի ջրանցքը դեռ այսօր էլ գոյութիւն ունի և ծառայելով իր սկզբնական նպատակին՝ ոռոգում է Վանի հարթավայրը: Նման կապակցութեամբ նկարագրում է Վանի մօտ եղած լեռան առանձնացած թիկունքը՝ ընդհանրապէս ճշտօրէն, թէև մասամբ փոքր ինչ մօթ կերպով: Ժայռն «այնքան պինդ է, որ ոչ ոք չէ կարող երկաթով մի գիծ քաշել վրան: Այստեղ Շամիրամը շինել տվեց տաճարներ, օթեաններ, գանձատներ և երկար վիհեր. ոչ ոք չգիտէ, թէ ինչպէս կարելի է եղել այսպիսի հրաշալի գործեր կերտել: Քարի ամբողջ երեսի վրայ, իբր գրչով հարթ մօմի վրայ, գրել տվեց շատ գրեր, որոնց միայն տեսքը զարմացնում է ամենքին: Դրանով չբավականա-

նալով, Շամիրամը հայոց աշխարհի ուրիշ շատ տեղերում ևս արձաններ շինել տալով՝ հրամայում է նոյն գրով եղածի մասին յիշատակել. շատ տեղերում էլ սահմանաքարեր դնել տվեց նոյն գրով:— Ինչպէս այժմ գիտենք, այս նկարագրութիւնը ճշտիվ համապատասխանում է իսկական իրողութեանը, եթէ մի կողմը թողնենք այդ բոլորը Շամիրամին վերագրելու հանգամանքը:

Հին հայկական գրականութեան մէջ եղած այս և ուրիշ նման հատվածներն առիթ տվին մտածելու արդի պատմական աշխարհագրութեան հիմնադիր Կարլ Րիտտէրին, որ մասնավորապէս Հայաստանի համար առանձին հետաքրքրութիւն ունէր.— նոյն հետաքրքրութիւնը ցոյց տվեց նաև հրա աշակերտ և յաջորդ Հայնրիխ Կիպլերը— որ այս ժայռագրերը, ժայռ օթեանները և ամբարայնք որմերը կարող են դեռ ևս իրանց գոյութիւնը պահպանած լինել մինչև այժմ. նա էր, որ երիտասարդ պրօֆ. Ֆրիդրիխ Էդուարդ Շուլցի ուշադրութիւնը հրավիրեց հետազօտութեան այդ շրջանի և նրանից սպասված արդիւնքի վրայ: Ֆրանսիացի արեւլագէտ և հայագէտ Սէն Մարտէնի կողմից ևս խրախուսվելով, որին Րիտտէրն էր իր կողմից համոզել, և Ֆրանսիայի տված միջոցներով սպահովված՝ Շուլցը 1828 և 1829 թ. երկու անգամ ճանապարհորդեց Հայաստանում: Այսպիսով գերմանական թելադրութեամբ և գերմանացի գիտնականի շնորհիվ ձեռք բերվեց նախահայկական բևեռագրերի մի ճիւղ ժողովածու. և այդ տեղի ունեցավ շատ ավելի առաջ, քան Բօտտան ու Լայարդը Խորասաքաթում և Կոյունջիկում յայտնագործեցին ասորական արքաների պալատների ավերակները. նոյն իսկ ավելի առաջ, քան Բիւրնուֆն ու Լասսէնը՝ հիմնվելով Գրօտեֆէնդի առաջին ընթերցանութեան փորձերի վրայ՝ լիակատար հասկացողութիւն կազմեցին հին պարսկական բևեռագիր արձանագրութիւնների մասին, որոնք եվրոպայում իսկապէս յայտնի դարձան Կարստէն Նիբուրի ճանապարհորդութիւններից յետոյ: Այս յաջողութիւնը տարաբաղդաբար շատ թանգ նստեց երիտասարդ գիտնականին. 1829 թ. Նիբուրը սպանվեց Զուլամերկի կողմերում՝ զոհվելով մի քրդական ցեղապետի ավազակամոլութեանը:

Շուլցի, 1828 թ. յունիսին, Պարիզ ուղարկած մի աշխատութիւնը Իւլիուս Մօլը հրատարակեց Ժուրնալ Ագիատիքում 1840 թ. այն բևեռագիր արձանագրութիւնների բնագիրներին հետ, որոնց պատճենները գտնվել էին դժբախտ երիտասարդ գիտնականին սպանող ավազակի ձեռքից իւր Թոթիւրի մէջ:

Մօլը յայտարարեց միևնոյն ժամանակ, որ Շուլցի նկարած քարտէզը տպագրել է տվել լիտօգրաֆիայով Société Asiatique-ը, սակայն քարտէզը կհրատարակվի ճանապարհորդութեան նկարագրութեան հետ: Իմ դիտցածով՝ այդ քարտէզն ու ճանապարհորդութեան նկարագրութիւնն երբէք լոյս չտեսան: Ֆրանսիացիները և գերմանացիները ընդհանուր պատվի պարտքը պէտք է լինի այդ հրատարակութեան իրականացումը: Նոյն իսկ այն երկրները համար, որոնց յետոյ ուրիշ ճանապարհորդներ այցելել ու հետազոտել են, Շուլցի տված տեղեկութիւններն էական նշանակութիւն կունենան և կընդարձակեն յետոյ տեղի ունեցած հետազոտութիւնները. իսկ այն երկրների համար, որոնք այսօր էլ դեռ չեն հետազոտված, այդ տեղեկութիւնները հիմնական պէտք է համարել:

Ավելի ուշ՝ 1850 թ. Հայաստան ճանապարհորդեց Հ. Ա. Լայարդը և Վանում Շուլցի գտած արձանագրութիւնների պատճէնները նորից վերցրեց ու բովական թվով նոր արձանագրութիւններ էլ գտավ, սակայն նրա բերածների բնագիրներն էլ երբէք չհրատարակվեցին:

Բացի վերոյիշեալներից՝ այդ արձանագրութիւնների նիւթերը շատացել են տասնեակ տարիների ընթացքում պատահական և առանձնակի գիւտերով: Առանձին ուշադրութեան արժանի են այն երկու արձանագրութիւնները, որոնք գտնվել են Հայաստանի արևմտեան ծայրում. դրանցից մէկը գտան 1840 թ. տաճկական ծառայութեան մէջ գտնվող Միւլբախ և Մօլտէ սպաները Իզոլիի մօտերը, որ գտնվում է Եփրատի՝ Մալաթիայի մօտ առաջացրած ծոցից մի փոքր վերև. միւսը գտավ Լայարդը մի փոքր հեռու դէպի արևելք, Պալուսի ամբողջում, Մուրադչայի—Եփրատի երկու ափունքներից հարավային—վրայ: Սակայն այդ առանձնակի գիւտերի մեծ մասը տեղի է ունեցել բուն Հայաստանում:

Այդ արձանագրութիւնները կարդալու փորձերը կարող էին սկսվել միայն Նինվէի բեկառգիր արձանագրութիւնների հետազոտութիւնից յետոյ: Վանի արձանագրութիւնների գրերն ամենամօտ, և լիակատար նոյնութիւնից միայն մի փոքր շեղվող, նմանութիւն ունին Նինվէի արձանագրութիւնների գրերի հետ: Սակայն Վանի արձանագրութիւնների լեզուն, ինչպէս որ հաստատվեց մանավանդ Մեյսի և Գիւարդի աշխատութիւններով, ազգակից չէ ոչ սեմական—ասորականին, ոչ առհասարակ սեմական և ոչ էլ հնդեվրոպական լեզուներին: Այդ լեզուն պատկանում է՝ նոր գիւտերի շնորհիվ մեզ համար

շարունակ բազմացող, Առաջավոր Ասիայի հին բնիկ լեզուների (idiom) թվին, որոնք համեմատաբար ամենամեծ նմանութիւն են ցոյց տալիս ուրալ-ալտայական լեզուների կազմութեանը, թէև չէ կարելի հաստատել, որ Վանի արձանագրութիւնների լեզուն այդ լեզուների ընտանիքին է պատկանում:

Այս հանգամանքներն ի նկատի ունենալով՝ հին հայկական արձանագրութիւնների ընթերցման համար հիմք ընդունվեց ամենից առաջ այն իրողութիւնը, որ դրանց մէջ ևս գտնվում են որոշ գրերի խմբեր,—իզոգրամ կոչվածները,—որոնք բարեկա-ասորական արձանագրութիւնների, ինչպէս նաև այժմեան չինական գրերի մէջ, առարկան ոչ թէ ըստ հնչական նշանների են ներկայացնում, այլ ավելի ըստ գաղափարի և պատկերացման: Այդպիսով կարելի եղավ ճանաչել գրերի զուտ արտաքին կերպարանքով, թէ որտեղ խօսքը վերաբերում է որ և է աստուծուն կամ թագավորին, և այդպիսով կարգացվեցին աստվածների ու արքաների անունները՝ առանց դիտենալու, թէ խաղերի լեզվով ինչպէս են կոչվում «աստուած», «արքայ» բառերը: Այդպիսով պարզվեց նոյնպէս, որ պետութեան մայրաքաղաքը, այժմեան Վանը—որին հայերը յաճախ անվանում են Շամիրամակերտ, «Շամիրամի» քաղաք—այդ արձանագրութիւնների մէջ Տուշպա անունն էր կրում. այս անունը յոյն աշխարհագիր Պտղոմէոսի գրվածքում գտնվում է Թօսպիա ձևով, իսկ այժմեան հայերը երբեմն Վանտօսպ կապակցութեամբ հասկանում են Վանի արգավանդ հարթավայրը, մասնավորապէս նրա արևմտեան՝ լճի կողմը գտնվող՝ մասը: Ընդհակառակն անյայտ մնաց—պատճառները յետոյ կբացատրեմ,—որ արքաներն իրանց հպատակներին անվանում են խաղիս՝ իրանց պաշտած զխավոր աստծու անունով, և որ մենք այդ անունով պէտք է հասկանանք հիւսիսային լեռնաբնակներին, որոնց յոյն հեղինակները լալդեր կոչում են տալիս, սակայն յաճախ էլ սխալմամբ—ինչպէս յետոյ կտեսնենք—անվանում են նրանց քաղդէացի՝ հարավային Բաբելոնում բնակվող սեմական յայտնի ժողովրդի անունով:

Յետոյ Գիւարդի եւ Մեյսի սրամատութեամբ յաջողվեց աւագուցանել, սկզբում նոյնպէս արձանագրութիւնների մէջ պատահող իզոգրամներով, որ որոշ նախադասութիւններ, որոնք կանոնավորապէս գտնվում են խաղական երկար արձանագրութիւնների վերջում, իրանց բովանդակութեամբ համապատասխանում են այն անէծքի ձևերին, որոնցով վերջանում են ա-

սորական արքաների արձանագրութիւնները. այդ անէծքն ուղղված էր լինում արձանագրութիւնը փշագնողների կամ այդ արքաներին վերագրված շէնքերը վնասողների դէմ: Այդպիսով հարթվեց այն ուղին, որով կարելի էր ծանօթանալ խաղաղական լեզվի կազմութեանն ու բառագիտութեանը: Սէյսը կարողացավ մի, հարկավ թերի, փորձ անել՝ մինչև այն ժամանակ յայտնի եղած «Վանայ» արձանագրութիւնները թարգմանելու և բացատրելու:

Նախահայկական բեկառգիր արձանագրութիւնների նիւթի սխտեմատիկ ժողովածու կազմելու ճանապարհը հարթվեց Դր. Վալդեմար Բեյքի 1891 թ. Հայաստանում կատարած գիտական ճանապարհորդութեան շնորհիւ: Բէյքը մասնագէտ քիմիկոս լինելով՝ երեք տարի էլէքտրօտեխնիկի պաշտօն վարեց Անդրկովկասի Գիտաբէկ - Ղալաբէնդում գտնվող Սիմէնսի պղնձահանքում-և այդ միջոցին Բուդոլֆ Վիրխովի համար նա բազմաթիվ նախապատմական գերեզմաններ հետազօտեց Ղալաբէնդի մօտակայքում և նրանց մէջ գտավ մի կենտրոնացած և նշանավոր քաղաքակրթութեան մնացորդներ, որոնց ամենանշանավոր արդիւնքներն էին այն մետաղեայ գօտեկապերը, որոնց հրատարակութեան հետ կապակցեց յետոյ (1895 թ.) Բուդոլֆ Վիրխովն իր նշանավոր ակադէմիական աշխատութիւնը՝ Կովկասի քաղաքակրթական-պատմական դիրքի վերաբերմամբ: Այս հոյակապ քաղաքակրթութեան առաջացնողները, Բէյքի ենթադրութեամբ, պէտք է լինէին Հայաստանի հնագոյն բնակիչները: Եվ որովհետև Վիրխովն էլ այդ խնդրի լուսաբանութեան համար առանձին հետաքրքրութիւն ցոյց տվեց, Բէյքը որոշեց լուծել այդ խնդիրը՝ «որոնելով այն վայրերը, որոնք ըստ ավանդութեան համարվում էին հայկական ամենահին ժողովրդի հնագոյն բնակավայրերը, որպէս զի այնտեղ գտնվող նախապատմական գերեզմանները բանալով և գտած իրերի համեմատութեամբ իր ենթադրութիւնը ստուգէ»: Այդպիսի ամենահին տեղերը համարվում էին ամենից առաջ Վանայ լճի շրջակայքը, Վան քաղաքը, յետոյ Երևանի կողմերը՝ ռուսական Հայաստանում, մանավանդ «հայկական ամենահին արքայանիստ Արմավիր քաղաքը»:

Այդ ճանապարհորդութիւնն սկսելիս՝ Բէյքը դեռ ևս չէր շօշափել բեկառգիր արձանագրութիւնների հետազօտութիւնը և այդ պատճառով ոչ մի տեղեկութիւն չուէր նախահայկական բեկառգիր արձանագրութիւնների գոյութեան մասին. նա անտեղեակ լինելով Սէյսի այդ արձանագրութիւններին մշակ-

ման նիւթին վերաբերեալ աշխատութիւններին՝ անծանօթ էր նաև Ուրարտուի պետութեան և պատմութեան նկատմամբ եղած այն գիտական արդիւնքներին, որոնք ստացվել էին վերոյիշեալ և ասորական արձանագրութիւնների լուսաբանութիւնից: Նա արտագրեց բազմաթիվ խաղաղական բեկառգիր արձանագրութիւններ, որոնց մի մասը Շուլցի գտածներն էին, իսկ մեծ մասը ընդհանրապէս նոր հանգիստացավ: Սակայն նոյն իսկ արդէն յայտնի եղած արձանագրութիւնների պատճէնները արժէք ունէին, որովհետև դրանք ավելի ճիշտ դուրս եկան, քան Շուլցի պատճէնները: Նրան յաջողվել էր նոյնպէս՝ այնպիսի արձանագրութիւնների պէտքական պատճէններ վերցնել, որ Շուլցը անընթեռնի էր համարել: Այդ միջոցին արդէն Բէյքը Հայաստանում սկսել էր նախահայկական արձանագրութիւնների ընթերցման արդիւնքներին ծանօթանալ և երբ ես Բուդոլֆ Վիրխովի շնորհիւ նրան ընկերացայ, նա արդէն կարողանում էր իր արտագրած արձանագրութիւնների մէջ եղած արքաների անունները ճշտութեամբ կարդալ: Ավելի էականն այն էր, որ Բէյքը իր արտագրած արձանագրութիւնների տեղն ու դիրքը մեծ ճշտութեամբ գիտել և նշանակել էր: Եթէ դրանք, ինչպէս յաճախ պատահում էր, իրանց սկզբնական տեղերումն էին մնացել գետեղված կամ կանգնած, հեշտ էր լինում արձանագրութիւնների պարունակութեան և մօտերը գտնված շէնքերի մէջ եղած կապակցութեան մասին ցուցմունքներ մատնանշել և գրվածքի միտքը հասկանալ: Այս տեսակէտից հիմնական նշանակութիւն ունեցան մանավանդ Շամիրամի ջրանցքի (Շամիրամ սուի) և Բուդասի կոթողի արձանագրութիւնները: Այդ հոյակապ ջրանցքի, որ առաջին անգամ մանրամասն նկարագրեց Բէյքը, գիմադիր պատի վրայ՝— և միայն այդ պատի վրայ՝—կան շատ արձանագրութիւններ, որոնց գլխավոր իմաստն է. «Մենուսար»—հնագոյն խաղերի արքաներից ամենանշանավորը, որ ապրում էր 800 տարի Ք. առաջ—«հիմնարկեց այս պիլլին»: «Մենուսար պիլի է սրա անունը». այստեղից անհրաժեշտ կերպով պէտք էր եզրակացնել, որ պիլլի նշանակում է ջրանցք կամ գուցէ դեռ այսօր էլ գոյութիւն ունեցող ջրանցքի պատը, որ իրապէս գլխավոր գործն է և որին յատկապէս հայոց մատենագիրները հիանալով «գետի ամբարտակ» են անվանում:

Երբէք չէր յաջողվի հասկանալ խաղերի թագավոր Բուդաս I-ի (վախճանվել է 714 թ. Ք. ա.) կոթողի արձանագրութեան—որ գտավ Բէյքը այս ճանապարհորդութեան

միջոցին — միտքը, եթէ Բէլքն առանձնապէս շեշտած չլինէր այն իրողութիւնը, որ այդ կոթողը գտնուում է մի արհեստական լճի մօտերը, որ կոչվում է «Բելշիշ-գեօլ» (քահանայի լիճ)։ հալանականօրէն այդ լճի հիմնարկութեանն է վերաբերում արձանագրութիւնը։ Բէլքի արձանագրութիւնները հրատարակելիս՝ այդ տեղեկութիւնների շնորհիվ ինձ յաջողվեց կարդալ վերոյիշեալ ցրանցքի և մանավանդ Բուզասի կոթողի արձանագրութիւնների գլխավոր կէտերը։ Վերջին արձանագրութիւն-հրովարտակից երեսց, որ Բուզաս I ութերորդ դարում նորից հիմնարկել է խալդերի պետութեան մայրաքաղաք Տուսպա-Վանը, որ ավերել էր սուրբ Գրքի մէջ յիշված Տիգլաթպիլեսը (IV) 735 թ. Ք. ա.։ Առաջավոր ասիական-եւրոպական քաղաքակրթութեան շրջանին պատկանող և այժմ դեռ ևս մարդաբնակ մի ուրիշ քաղաք հազիվ թէ կարողանայ պարծենալ, որ ունի այդպիսի մի հին, Հռոմի ավանդական հիմնարկութեան թվին (754 թ. Ք. ա.) հասնող, արձանագրած բնագրով պահպանված՝ հիմնարկէքի հրովարտակից։

Բուզասի կոթողի արձանագրութեան իմ ընթերցումն եղավ գլխավոր առիթն այն ճանապարհորդութեան ծրագրի, որի ընթացքն ու արդիւնքը նկարագրված է այս գրքում՝ անտարակոյս որոշ սահմանափակումներով։

Արդէն 1893 թ. դր. Բէլքն առաջարկեց ինձ, որ միասին ճանապարհորդենք Հայաստանում և սիստեմատիկ կերպով հետազոտելով՝ նախկին խալդերի պետութեան ամբողջ շրջանը, նոր արձանագրութիւններ որոնենք, իսկ առաջվայ գտածները տեղն ու տեղը համեմատենք։ Ապագայ ուղեկիցս իր առաջին ճանապարհորդութեան ժամանակ զանազան տեղեկութիւններ էր ստացել սեպագիր արձանագրութիւնների գոյութեան մասին, բայց չէր որոնել, որովհետեւ եւրօպայից նրան սխալ տեղեկութիւն էին տվել՝ իբր թէ նախահայկական բոլոր բեռագիր արձանագրութիւնները յայտնի են արդէն։

Այսպիսով նոր արձանագրութիւններ գտնելու համար ապահով հիմք ունէինք. իսկ այդ հանգամանքը բավական էր՝ այսպիսի մի ձեռնարկութիւն արդարացնելու։ Մնում էր միայն գտնել այն 29,000 մարկը, որ պէտք է ծախսվէր ութ ամսվայ ընթացքում տեղի ունենալիք էքսպեդիցիօնի ընթացքում։ Այդ էլ յաջողվեց՝ գլխավորապէս Բուզաօլի Վիրխովի ազդու հետաքրքրութեան և հռահղուն հոգացողութեան շնորհիվ. նա տվեց առաջին շօշափելի դրամական նպաստը. «Բուզաօլի Վիրխով»-հիմնարկութեան գումարներից։

Բացի բազմաթիվ մասնավոր անհատներից և իմ անձնական բարեկամներից՝ նպաստ տվին և հետեւալ գիտական ընկերութիւնները. — պրուսական գիտութեանց ճեմարանը, Գեօթինգէնի գիտութեանց ընկերութիւնը, Համբուրգի աշխարհագրական ընկերութիւնը, Համբուրգի Ավերսօֆ և Կէլլինգսուզէն հիմնարկութիւնները և վերջապէս նորին մեծութիւն գերմանական կայսրն՝ իր տրամագրութեան ներքոյ եղած ֆօնդից 5,000 մարկ։

Գիտութեանց ճեմարանի որոշած նպաստի մասին ինձ տեղեկութիւն տվող Թեօֆո Մամպեյն ի միջի այլոց գրում էր ինձ, որ այժմ կարող ենք ճանապարհ ընկնել՝ «եթէ պարունայք քրդերը քոյլ կտան»։

Եվ իսկապէս մեր ձեռնարկութիւնը տարիներով ուշացավ՝ Հայաստանում տեղի ունեցող խռովութիւններին շնորհիվ և երբ ես 1898 թ. մայիսի 8-ին ճանապարհ ընկայ Բերլինից, դեռ ևս հաստատ չգիտէինք՝ թէ կարճի ենք մուտք գործել Տաճկահայաստան, որ մեր հետազոտութեան գլխավոր շրջանը պէտք է լինէր։ Այն ժամանակ չէր կարելի նոյնպէս նախատեսել, որ ութ ամսվայ համար նախագծված ճանապարհորդութիւնը տարի ու կէս կտևէ՝ գտնված բեռագիր արձանագրութիւնների շատութեան և աշխատանքի շրջանն ընդարձակվելու պատճառով։

Հայաստանում ճանապարհորդելու նպատակը չէր կարող լինել միմիայն՝ խալդական նոր արձանագրութիւններ ժողովելը և արդէն յայտնի եղածների համեմատութիւնը։ Հայաստանի և սահմանակից երկրների մեծ մասի աշխարհագրութիւնը համարեալ թէ հետազոտված չէր. բացի դրանից անհրաժեշտ էր տեղն ու տեղը հետազոտելով լուսաբանել մի ամբողջ շարք պատմական և պատմա-աշխարհագրական խնդիրներ։

Այս ճանապարհորդութեան նպատակն ամբողջովին գնահատելու և նկարագրութեան միջոցին կրկնութիւններից խուսափելու համար նպատակայարմար է այստեղ նախապէս մի համառօտ ակնարկ ձգել Հայաստանի այժմեան դրութեան և պատմական զարգացման վրայ։

Հայաստանն այսօր մի միութիւն կազմող քաղաքական գաղափար չէ. այդ երկրի մեծագոյն մասը պատկանում է ասիական Տաճկաստանին, իսկ փոքր մասերը՝ Ռուսաստանին և Պարսկաստանին։ Բնորոշ է, որ այս երեք հատվածներից իւրաքանչիւրն ունի մի նշանավոր արպեան լիճ. ռուսական Հայաստանում է Գեղամայ լիճը, պարսկական Հայաստանում՝ իր

մեծութեամբ և խոշոր քանակութեամբ աղ պարունակող նշանաւոր Ուրմիոյ լիճը, իսկ տաճկական Հայաստանում՝ նոյնպէս աղ պարունակող Վանայ լիճը, որ ամբողջ Տաճկաստանի արեւելեան մասին բնորոշ կերպարանք է տալիս: Վանայ լճի ջուրը, ինչպէս և Ուրմիոյ լճինը, չէ խմվում: Այս երեք լճերի մակերևոյթները փոփոխութեան են ենթարկւում, այդ պատճառով անհրաժեշտ էր հետազոտութիւնը:

Վանայ լճի արտաքին կերպարանքը Սիցիլիա կղզու նման է: Լճի արեւելեան ափի ոչ անմիջապէս հարավային մասում է այժմեան Վան քաղաքը, մօտավորապէս Սիրակուզայի համապատասխան դիրքով: Վանը մի ժամանակ եղիլ է խաղերի պետութեան մայրաքաղաքը և յետոյ, ավելի ուշ, բուն հայկական թագավորների ամրոցները:

Ըստ նահանգների բաժանման՝ ռուսական Հայաստանը պատկանում է Կովկասի գնեւերալ նահանգապետութեան¹⁾ և յատկապէս Անդրկովկասեան Գանձակի նահանգին և մասամբ Թիֆլիսի²⁾, մինչդեռ Կարսի, մեծ մասամբ նոյնպէս հայկական, շրջանը, որ 1877 թ. ռուս-տաճկական պատերազմից յետոյ Տաճկաստանից անցավ Ռուսաստանի ձեռքը, դեռ ևս ղինվորական վարչութեան է ենթարկւում:

Պարսկական Հայաստանը կազմում է Ադերբեյջան — Հին (Մարաստան) Ատրպատականը — մեծ նահանգի արեւելեան մասը:

Ասիական Տաճկաստանի նահանգներից ամբողջովին կամ մեծ մասամբ Հայաստանին են պատկանում Վանի, Բիթլիսի, Էրզրումի, Մամիւրէտ էլ Ադիզի (Սարբերդ) վիլայէթները: Իրանց վրայ ավելանում են նաև Դիարբեքիւրի և Մօսուլի մասերը: Իւրաքանչիւր այսպիսի տաճկական նահանգ կառավարում է մի վալի (գնեւերալ նահանգապետ): Ամեն մի վիլայէթ բաժանվում է շատ լիվանների կամ սանջակների, որոնց կառավարիչներն են միւթէսարիֆները. լիվաներն էլ իրանց կարգին բաժանվում են կազանների և կառավարվում գայմա-գամիների ձեռքով: Մակայն կան և այնպիսի կազաններ, որ անմիջապէս վալիի իշխանութեան ներքոյ են գտնվում: Բացի դրանից այն կազան, որտեղ գտնվում է վիլայէթի կամ լիվայի գլխավոր քաղաքը, սովորաբար կառավարում է անմիջապէս

վալին կամ միւթէսարիֆը: Կազայի ստորաբաժանումներն են նահիէները (շրջանները), որոնց գլուխ են կանգնած միւդիրները: Տաճկական քաղաքներն ունին մի մի քաղաքագլուխ և բաժանվում են առանձին-առանձին թաղամասերի — մահալ կոչվածները — իսկ գիւղական համայնքների գլուխ են կանգնած, իբրև գիւղական տանուտէրեր, մուխտարները:

Մեզ համար սովորական դարձած «Արմենիէն» (Հայաստան) անունը առաջին անգամ պատահում ենք վեցերորդ (Ք. ա.) դարում՝ Դարեհ Վշտասպի հին պարսկական բեւազիր արձանագրութիւնների մէջ: Գլխավորապէս հնդգերմանական, բայց արդէն ոչ արիական, փոքրասիական, տարբերով խառնված հայ ժողովուրդը գաղթել է՝ այնուհետև իր անունով կոչվող երկիրը, ամենավաղը և թիւերորդ, բայց հաւանականօրէն վեցերորդ, դարի ընթացքում Քրիստոսից առաջ: Հայերն իրանց արմենիէր չեն անվանում, այլ հայեր (եղալի հայ):

Մեզ յայտնի, հին ասորական արքայական արձանագրութիւնների շնորհիվ ազօտ կերպով լուսաբանված հնագոյն ժամանակի ընթացքում՝ վերջը Հայաստան անունը ստացող երկրում գտնվում էին Նայիրի ազգերը, որոնք բնակվում էին իւրար կողքի և թոյլ կապերով մի պետութիւն էին կազմում: Այդ ազգերի հետ ամենից առաջ, ըստ մեր գիտութեան, պատերազմեցին՝ Սալմանասար I 1320 թ. Ք. ա. և դրա որդի Թուկուտի-Նինիբ I — երկուսն էլ Ասորեստանի զօրեղագոյն թագավորներից են: Միևնոյնը կարելի է ասել Թիլատպիլեզէր I (1000 թ. քիչ առաջ, իսկ ըստ ոմանց՝ մի դար առաջ) վերաբերմամբ: Նայիրի ազգերը հավանօրէն սերտ կապով միանալով՝ մի պետութիւն կազմեցին Լուտիպրիսի որդի Սարգուր I-ի իշխանութեան ժամանակ, որ ի միջի այլոց թողել է նաև Վանում իր՝ դեռ ևս ասորական լեզվով կազմված արձանագրութիւնները, որոնք յայտնի դարձան Շուլցի և Լայարդի շնորհիվ: Այս Նայիրի պետութիւնը ծաղկման շրջանին էր հասել, ըստ երևոյթի, Ասորեստանի արքայ Ասուրնասիրբալ III-ի ժամանակ (885 թ. մինչև 860 թ. Ք. ա.), որի տարեգրութիւնները, չնայելով իրանց մէջ պարունակած անձնագրութիւններին, ցոյց են տալիս, որ Նայիրի ազգերը, մասամբ միանալով արեւմուտքից գէպի Միջագետք գլխող սեմական ուրիշ ցեղերի հետ, զգալի կերպով առաջ էին գնացել գէպի հարավ, նվաճելով նախկին ասորական երկիրները ոչ թէ միայն Սալմանասար I ժամանակները, այլ և նոյն իսկ Ասուրնասիրբալ III-ի թագավորութեան օրերում: Հիւսիսի հետ ունեցած

¹⁾ Լէման Հաուպտի ճանապարհորդութեան միջոցին Կովկասի փոխարքայութիւնը վերացուած էր: Ծ. Թ.

²⁾ Լէման-Հաուպտի այս բաժանումը պատահական սխալի կամ թիւքիմացութեան արդիւնք պէտք է համարել. մոռացված է Երնվանի ընդարձակ և ամենաշատ նահանգը: Ծ. Թ.

յարաբերութեան և այնտեղ ձեռնարկած պատերազմական արշավանքների վերաբերմամբ բազմաթիվ էական և լուսաբանութեան կարօտ կէտեր են պարունակում հէնց Ասուրնասիրբալ Ու-ի տաբեգութիւնները:

Ասուրնասիրբալ Ու-ի որդի Սալմանասար Ու-ի թագավորութեան ժամանակ (860 թ. մինչև 826 թ. Ք. ա.) խալդեի կամ Ուրարտացիների ցեղը իշխող հանդիսացաւ՝ Արամի առաջնորդութեամբ, որին հայոց առասպելական ավանդութիւնը համարում է հնազոյն հերոսներից և տիրապետողներից մէկը: Մեր էքսպէդիցիօնի ձեռնարկութեան սկզբում դեռ ևս Պալդերի Հայաստան գաղթելու ելակէտը չէր պարզված ու հասունացած՝ որոշ վճիռ կայացնելու համար: Ասուրնասիրբալ Ու-ի ցուցամով արձանագրութիւններից մի վարիանտի մէջ մէկ անգամ արամայեցիների հետ յիշվում է Ուրարտուն:

Սալմանասարի վարած պատերազմները Արամի և նրա որդի Սեդուր-Սարգուրի դէմ՝ շատ քիչ յաջողութիւն ունեցան: Թէ արդեօք այս Սարգուրը Արամի՞ որդին է, թէ նոյն անձնավորութիւնը, որ Լուտիպրիսի որդին է հանդիսանում,—որ ավելի քիչ հավանականութիւն ունի—մինչև այսօր անորոշ է մնացել: Արամի յաջորդ Սարգուրի որդի Իսպուլինիսի ժամանակ խալդերը հաստատվում են Վանում և Իսպուլինիսը ժամանակից առաջ իրան գահակից է դարձնում իր հօր որդի Մեմուասին, որ պէտք է նկատվի խալդական պետութեան իսկական հիմնադիրը: Մէնուասը, որ թէ պատերազմի և թէ խաղաղութեան միջոցին շատ նշանավոր տիրապետող հանդիսացաւ, Ասորեստանի Ադադ-Նիրարիս IV արքայի ժամանակակիցն ու հակառակորդն էր: Ադադ-Նիրարիսն ամուսնանալով բաբելական իշխանուհիներից մէկի, պատմական Շամիրամի հետ՝ իր ասորական թագավորութեանը միացրեց նաև Բաբելաստանի իշխանութիւնը:

Մէնուասի և Սամուրամատի ամուսնու իշխանութեան ժամանակ՝ Ասորեստանն և Ուրարտու-Պալդիան հավասարակշռութիւն էին պահպանում: Մէնուասի որդի Արգիստիս [-ի ժամանակ խալդերը գերակշռութիւն ձեռք բերին առաջավոր Ասիայում: Արգիստիսի իշխանութիւնը ժառանգեց նրա որդի Սարգուր Ու (Ու), որին յաղթեց սր. գրքի Տիգլատպիլեսէր IV-ը (745—727 թ. Ք. ա.): Ասորեստանցիները ներս խուժեցին մինչև Վանի ամրոցի ստորոտը և կործանեցին ամրոցաժայռից 5 կիլոմետր հեռու գտնվող, Մէնուասի հիմնած և Շամիրամ սուրի շնորհիւ ոռոգվող, Վան քաղաքը: Այդ դէպքից յետոյ աստուծու և արքայի աթոռանիստը դարձաւ Վանի մօտ եղած

Պալիարքիայի բլուրը, որի ստորոտին անմիջապէս կից, լավ պաշտանելու նպատակով, Տուսպա նոր քաղաքը հիմնեց, ինչպէս արդէն յիշել ենք, Սարգուրի որդի Ռուզաս I-ը, որ Ասորեստանի Սարգոն II արքայի (722—708 թ. Ք. ա.) անխոնջ ախոյեանն էր: Ռուզաս I մեռաւ 714 թ. Ք. ա.: Ըստ Սարգոնի տեղեկութիւնների՝ Ռուզասն անձնասպան եղաւ: Ռուզասի որդի Արգիստիս II-ի անունը յիշում է Ասորեստանի արքայ Սանհէրիբը (705—681 թ. Ք. ա.):

Պալդիայի վերջին տիրապետողների անձնավորութեան ու ժամանակագրութեան, ինչպէս նաև այդ պետութեան վախճանի հանգամանքները դեռ ևս մութն էին և լուսաբանութեան կարօտ: Ասորեստանի Ասուրարհադոն (681—668 թ. Ք. ա.) և Ասուրբանաբալ (668—626 թ. Ք. ա.) արքաների արձանագրութիւններից մասամբ յայտնի էին Ռուզաս անունը կրող երկու թագավորներ, որոնցից մէկը էրիմենասի որդին է, միւսը Սարգուր III-ի (VI), բայց յայտնի չէր դրանց յաջորդականութիւնը և ժամանակագրական կապակցութիւնը: Հնդ-գերմանական գաղթականութեան փոթորիկների միջոցին կործանվեցին՝ ինչպէս Նենուէի (607 թ. Ք. ա.), այնպէս էլ խալդական պետութիւնները: Այդ գործում էական դեր խաղացին կիմէրները, որոնք հավանօրէն Թրակիայից էին կամ թէ Թրակիացիներին և իրանացիներին կապակցող մի ժողովուրդ, որ Կովկասի վրայով ներս խուժեց Ասիա: Լուսաբանութեան կարօտ էին—և դեռ այսօր էլ կարօտ են—լիդիացիների և մարաստանցիների իրար դէմ մղած կռիւները՝ Ուրարտու հրկրի համար և համարեա նոյնաժամանակ տեղի ունեցած հայերի գաղթի հանգամանքները:

Այնուհետև Հայաստանը պատկանելով պարսից Աքեմենեան պետութեանը՝ կազմում էր երկու սատրապութեան բաղկացուցիչ մասը և Կունաքսայի ճակատամարտից յետոյ (401 թ. Ք. ա. աշնանը) դարձաւ տասը հազար յոյն վարձկան զօրքերի նահանջի միջոցին տեղի ունեցած կռիւների գլխավոր հանդիսավայրը: Յոյն վարձկան զօրքերը, Սպարտայի թոյլտվութեամբ, օգնեցին Կիւրոս Կրտսերին ապստամբելու և կռիւ մղելու իր եղբայր Արտաքսէրքսէս II մեծ արքայի դէմ: Տասնեակ տարիների ընթացքում յաճախ փորձեր են եղել ճշտութեամբ որոշելու այդ նահանջի ճանապարհը, ինչպէս որ նկարագրել է Քսենոֆոնը «Անաբազիս»-ում, սակայն բավարար լուծումն չէ ստացել այդ խնդիրը՝ ճանապարհի մի շարք գլխավոր կէտերի վերաբերմամբ:

Երբ պարսից պետութիւնը կործանվեց Աղէքսանդր Մեծի ձեռքով, Հայաստանը մնաց անկախ՝ և դիպլոմատները ու էպիգոնները կռիվների մէջ էլ, ինչպէս երևում է, միայն երկրորդական դեր է խաղացել: Ասորիքը և համարեաւ ամբողջ Առաջավոր-Ասիան տիրապետող Սելևկեաններից էլ Հայաստանը միայն անվանական կախումն ունէր, որ արտայայտվում էր հարկատվութեամբ:

Միայն Անտիոքոս III-ի իշխանութեան ժամանակ Քսերքսէս անունով մի բնիկ տեղացի իշխանի յաղթելով՝ Հայաստանը դարձավ հպատակ երկիր, բաժանվեց երկու մասի և բնիկ տեղացի իշխանները ստորագրեցին՝ կարգուելով իբրև սատրապ կամ ստրատէդ: Առեկեան մեծագոյն մասը, իսկական Հայաստանը, ստացավ Արտաքսիասը¹⁾, իսկ Եփրատից դէպի արևմուտք գտնվող շրջանը, Սօֆենէն²⁾ և շրջակայ երկրները ստացավ Չարիադրեսը: Սակայն երբ Անտիոքոս III յաղթվելով հռոմայեցիներից՝ ստիպվեց խաղաղութիւն կնքել (188 թ. Ք. ա.), այդ երկու սատրապներն էլ իրանց անկախ յայտարարեցին. այնուհետև գոյութիւն են ստանում երկու ինքնուրույն պետութիւններ՝ Հայաստան և Սօֆենէ, որ կառավարվում են Արտաքսիասի և Չարիադրէսի սերունդների ձեռքով:

Արտաքսիասը իր պետութեան հիւսիսային մասում, Կասպից ծովը թափվող Արաքս մեծ գետի շրջանում, հիմնեց Արտաքսատա³⁾ մայրաքաղաքը, որի տեղը առանձնապէս բարեյայտող համարելով մատնացոյց է արել, ինչպէս ասում են, հռոմայեցիներից փախուստ տվող՝ Կարթագէնի մեծ զորավար Հաննիբալը:

Հայաստանի և Սօֆենէի անջատման միջոցին կարող էր ազդեցություն ունենալ Պարթևների օրինակը, որոնք արդէն Անտիոքոս III-ի թագավորութեան սկզբում Սելևկեան պետութիւնից անջատվել և մի նոր իրանական պետութիւն էին հիմնել՝ Արշակունիաց թագավորական տոհմի առաջնորդութեամբ: Պարթևների պետութեան գոյութիւնը Հայաստանի քաղաքական և քաղաքակրթական դարգացման համար՝ մեծ և ճակատագրական նշանակություն ունեցավ:

Այնուհետև դէպքերն այնպէս տարօրինակ կերպով դասավորվեցին, որ Սելևկեան տիրապետութեան քայքայման ժամանակ՝ Արտաքսիասի ընտանիքին պատկանող մի հայ իշխան

¹⁾ Արտաշէս: Ծ. Թ.

²⁾ Ծովք կամ Ծովաց աշխարհ: Ծ. Թ.

³⁾ Արտաշատ: Ծ. Թ.

Սելևկեան տիրապետութեան ժառանգը դարձավ Առաջավոր Ասիայում. դա Տիգրանն էր, որի թագավորութիւնը Հայաստանի ազգային ծաղկման գագաթնակէտը կազմեց:

Տիգրանն իր պատանեկութեան օրերում իբրև պատանդ պարթևների գերին լինելով, յետոյ ոչ միայն խից նրանց ձեռքն ընկած Հայաստանի մասերը, այլև յաջող պատերազմներից յետոյ տիրապետեց նաև Սօֆենէն, Կապադովկիան և հպատակեցրեց այն փոքրիկ պետութիւնները, որոնք կազմվել էին Հայաստանի և Պարթևների պետութեան սահմանների միջև—Կորդենէն¹⁾, Ադիաբենէն, Ատրոպատենէն²⁾:—Վերջապէս Տիգրանը, հռոմայեցիների զօրեղ թշնամի Միհրդատ Պոնտացու կնոջ եղբայրը, տիրեց (83 թ. Ք. ա.) այն բոլոր երկրները, որոնք մինչ այդ ժամանակ պատկանում էին Սելևկեաններին, որոնց վերջին իշխանները միմեանց ոչնչացնում էին՝ անհաշտ, մի քանի սերունդ տևող, եղբայրասպան պատերազմներով: Այդ միջոցին Հրէաստանը նոյնպէս գտնվում էր հայերի գերիշխանութեան ներքոյ: Այսպիսով Տիգրանի ժամանակ Հայաստանը նորից ձեռք բերեց այն ընդարձակութիւնն ու հզօրութիւնը, որ երբեմն ունեցել էր ուրարտեան խաղերի տիրապետութեան ժամանակ և գերազանցեց:

Սակայն այդ փառքը կարճատև եղավ: Տիգրանը 69 թ. Ք. ա. իբրև հռոմայեցիներից հալածված և իր մօտ ապավինած Միհրդատի դաշնակից՝ յարձակման ենթարկվեց հռոմայեցիների կողմից և մեծ ջարդ կրեց նրանց զօրավար Լուկուլոսից՝ իր նոր հիմնած Տիգրանական բազայի մօտ: Թէև Լուկուլոսին չյաջողվեց Արտաքսատան էլ գրավել, բայց իրերի զարգացման ընթացքն այն հետևանքն ունեցավ, որ Տիգրանը երկու տարի յետոյ ստիպված եղավ իր անձն ու պետութիւնը հռոմայեցի Պոմպէոս զօրավարի տրամադրութեան տակ դնել: Թէև Հայաստանը Տիգրանի ձեռքը մնաց, սակայն նա ստիպվեց իր գրաված բոլոր երկրները վերադարձնել և հսկայական պատերազմական տուգանք վճարել: Այնուհետև Տիգրանը թէև «Հռոմէական ազգի բարեկամն ու դաշնակիցն» էր կոչվում, բայց իրապէս ոչ այլ ինչ էր, եթէ ոչ հռոմայեցիների վասալը: Այդ օրից սկսած Հայաստանը, ամբողջ ճիւղ դարերի ընթացքում, մնաց իբրեւ հռոմայեցիների եւ պարթևների վեճի առարկայ եղած, սպառնալից պետութիւն: Հռոմայեցիների ու պարթև-

¹⁾ Կորդուաց երկիր: Ծ. Թ.

²⁾ Ատրպատական: Ծ. Թ.

ների միմեանց դէմ վարած անընդհատ պատերազմների միջոցին Տիգրանի անունը կրող Տիգրանակերտ քաղաքը շատ անգամ մեծ դեր է խաղացել:

Հին դարերի պատմական աշխարհագրութեան ամենավիճելի խնդիրներից մէկն էր Տիգրանակերտի տեղի որոշումը, այդ պատճառով էլ մեր էքսպեդիցիօնի համար շատ գրավիչ բան էր այդ խնդրի լուծմանը նպաստելու ցանկութիւնը, սակայն հարկաւ չէինք կարող նախատեսել, որ այդ խնդրի վերջնական լուծումը պէտք է մեզ վիճակվէր:

Եփրատից դէպի արևմուտք գտնվող և Փոքր Հայք կոչված երկիրն արդէն Պոմպէոսը—փոքրասիական յարաբերութիւնները կանոնավորելու ժամանակ—համարում է Հռոմից կախումն ունեցող պաշտանված պետութիւն և Վեսպասիանի իշխանութեան միջոցին միացել է հռոմէական պետութեանը, իբրև Կապադովկիա գավառի բաղկացուցիչ մասը:

Մեծ Հայաստանի հետագայ պատմութեան համար շատ մեծ նշանակութիւն ունեցավ Ներոն կայսրի ժամանակ տեղի ունեցած դինաստիայի փոփոխութիւնը: Այդ ժամանակ հռոմայեցիները հովանավորված և Արտաքսիասի տոհմից սերած Տիգրանը յաղթվեց պարթևների Արշակունի թագավոր Վոլգեզիսից: Թէև հռոմայեցի զօրավար Կորբուլոն յաղթեց պարթևներին, բայց և այնպէս հռոմայեցիները ձեռք վերցրին Տիգրանից և Վոլոգեզիսի եղբայր Տրդատին կարգեցին Հայաստանի թագավոր՝ հռոմայեցոց գերիշխանութեան ներքոյ:

Այսպիսով Հայաստանի տիրապետութիւնն անցավ Արշակունեաց տոհմին, որ շատ ավելի երկարատև եղավ, քան պարսկական Արշակունիների իշխանութիւնը: Երբ 226 թ. Ք. յ. Պարսկաստանում Արշակունիները գահազուրկ լինելով տեղի տվին Սասանեան նոր իշխանական տոհմին, Հայաստանում շարունակվեց Արշակունիների տիրապետութիւնը. հայ Արշակունիներն իբրև ազգակից պարսից գահազուրկ իշխողների՝ բնականապէս մահացու թշնամի էին Սասանեան մեծ արքաներին: Արդէն 238 թ. հայոց Արշակունի Սուրբով թագավորը սպանվեց պարսիկների զրգմամբ: Այդ դէպքից յետոյ տեղի ունեցած խառնաշփոթութեան միջոցին պարսիկներին յաջողվեց տիրել Հայաստանը ժամանակավորապէս և հայերին ստիպել ընդունելու նրանց ատած Որմզդի կրօնը, մինչդեռ հայերը մինչև այն ժամանակ իրանց սեփական հեթանոսական կրօնն ունէին—թէև այդ կրօնն էլ ազատ չէր իրանական խառնուրդից: Սակայն պարսիկները կարճ ժամանակից յետոյ ջարդ կրեցին

Պալմիրայի տիրապետող ռազմաանժառանգ Օրաբոս իմպերատորից և խոսրովի որդի Տրդատին, որ հռոմայեցոց երկիրն էր փախել, յաջողվեց վերականգնել իր թագավորութիւնը: Այնուհետև Տրդատը կանգուն պահեց իր պետութիւնը, հռոմայեցոց հետ սերտ բարեկամական կապ հաստատելով, և անընդհատ կռիվ մղեց պարսիկները դէմ:

Հայաստանում ազգային շարժումից ավելի նշանավոր հանդիսացավ կրօնականը, երբ քրիստոնէութիւնը տարածվեց Գրիգոր Լուսավորչի շնորհիւ և դարձավ պետական կրօն այդ երկրում:

Ըստ ավանդութեան՝ Գրիգորն եղել է Սուրբովին սպանող Անակի որդին. թէ որքան ճիշտ է այդ մի կողմն ենթ թողնում: Յամենայն դէպս նա, ինչպէս և բազմաթիւ հայ իշխաններն ու մեծամեծները, պարսիկների տիրապետութեան ժամանակ Հայաստանից փախել է հռոմայեցոց երկիրը և Կեսարիայում (Կապադովկիայում գտնվող այս քաղաքը առանձին նշանակութիւն ունի հայոց պատմութեան համար՝ հայերի Հայաստան գաղթելու խնդրի նկատմամբ) քրիստոնէական ու յունական կրթութիւն ստացել. այս հանգամանքը շատ մեծ նշանակութիւն ունեցավ Հայաստանի ամբողջ կրօնական և բաղադրակրթական զարգացման համար:

Հայոց պետութիւնը կրկին գրավելու և վերանորոգելու գործում Գրիգորը եռանդուն օժանդակութիւն ցոյց տվեց Տրդատ թագավորին: Սակայն պետութեան վերակազմութեան հետ կապակցված էր նաև հայոց ազգային կրօնի վերականգնելը, որ յետ էր մղվել պարսից կրակապաշտութեան ստիպմունքից: Տրդատի կարգադրութեամբ մեծ ջբով կատարվող ազգային տօնի ժամանակ՝ Գրիգորը մերժեց ծաղկեայ պսակներ զոհել մեծ դիցունհի Անահտի խորանի առաջ և յայտնեց իր քրիստոնեայ լինելը:

Ձայրացած թագավորը, ինչպէս ասում են, սաքսափելի տանջանքների երթարկեց նրան. ըստ ավանդութեան՝ Գրիգորն իբրև թէ 13 տարի ֆնացել է մի վերապի մէջ և ապրել՝ ծածուկ քրիստոնէութիւն դառնալով մի կնոջ տված կերակրի շքանորհիւ: Վերջապէս թագավորը մի հրաշքով քրիստոնեայ է մկրտվում և այնուհետև Գրիգորի հետ միատեղ ձեռնարկում ամբողջ երկրի քրիստոնէացման գործը:

Այսպիսով Հայաստանն առաջին երկիրն էր, որտեղ քրիստոնէութիւնը պետական կրօն դարձավ. մի մարդու կեանքի չափ տարիներ անցնելուց յետոյ միայն՝ Կոստանդին Մեծը,

Մաքսէնտրոսին յաղթելուց յետոյ, քրիստոնէութիւնը դասեց հռոմէական տէրութեան մէջ ընդունված պետական պաշտամունքների շարքը: Հայաստանում, ընդհակառակը, քրիստոնէութիւնն իրեն ազգային կրօն՝ պէտք է փոխարինէր միջև այդ ժամանակ պաշտած կրօնին: Այս, իշխանութիւնից ստիպողաբար հրամայված, դարձի միջոցին—ինչպէս որ առհասարակ լինում է կրօնների այդպիսի փոփոխութեան ժամանակ—ժողովրդին պէտք էր դիւրութիւններ տալ՝ պահպանելով նախկին պաշտաման վայրերը և սիրելի դարձած հին սովորոյթները: Հայաստանում, առանց որոնելու, շատ անգամ եմ նշկատել այդ երևոյթի ազդեցութեան հետեանքները:

Հայաստանի ամենամեծ շքով տօնվող սրբութիւնը գտնվում էր Տաւրոնի Աշտիշատում—Տակիտոսի՝ regio Tauraniti-um—այժմեան Մուշի գավառում և նվիրված էր Վահագն, Անահիտ ու Աստղիկ աստվածներին: Դրանց երեք տաճարները կործանվեցին, սակայն դրանց տեղը կառուցվեց քրիստոնէական եկեղեցի—բոլոր հայոց եկեղեցիների մայր տաճարը—հովանորէն հէնց այն վայրում, որտեղ այժմ կանգնած է սուրբ Կարապետ հռչակավոր վանքը:

Աշտիշատում էր գտնվում նաև հայոց եկեղեցու հոգևոր պետի, կաթողիկոսի, դահր. առաջին կաթողիկոսն եղավ Գրիգորը՝ Կեսարիայի արքեպիսկոպոսի ձեռքով օծումն ստանալուց յետոյ, իսկ այնուհետև կաթողիկոսութիւնը ֆիաց Գրիգորի ընտանիքի ժառանգութիւնը:

Հայոց կաթողիկոսութիւնը—որ կարելի է համեմատել (ըստ պրօֆ. Գեյցէրի) հրէական քահանայապետութեան հետ—ավելի զօրեղ և հաստատուն հանդիսացավ, քան թագավորութիւնը և հէնց այսօր էլ միայն դրանով է արտայայտվում հայ ազգի նախկին միութիւնը: Սակայն կաթողիկոսն այլ ևս Աշտիշատում չէ գահակալում, այլ Էջմիածնում, որ այժմ գտնվում է ռուսական Հայաստանում: Անտոնիոս Պիոսի ժամանակ, 163 թ. Ք. յ., երբ հռոմայեցի զօրավար Պրիսկոսը կործանեց հայոց մայրաքաղաք Արտաշատը, Արաքսի հարթավայրում հիմնեց մի նոր քաղաք, որ սկզբում կոչվում էր հէնց Նոր-Քաղաք, յետոյ մեծ մասամբ Վաղարշապատ, իսկ այսօր՝ Էջմիածին: Այս նոր մայրաքաղաքը և արքայանիստը չորրորդ դարից սկսած նաև եկեղեցական ասպարէզում յետ միեւն Աշտիշատը: Վաղարշապատում կայացավ նոյնպէս հայոց եկեղեցու առանձնացման համար վճռական նշանակութիւն ունեցող եկեղեցական ժողովը (491 թ. Ք. յ.), որով հայերը վերջնա-

կանապէս ընդունեցին Քրիստոսի բնութեան լիակատար միութեան դավանանքը և այդպիսով հակասեցին յոյն եկեղեցու համար կանոն դարձած Քաղկեդոնի հայրապետական ժողովի (451 թ. Ք. յ.) դավանանքին, որով Քրիստոսի մէջ անբաժան կերպով միացած էին համարվում երկու բնութիւն՝ մարդկային և աստվածային: Այժմ Վաղարշապատ-Էջմիածինն իր եկեղեցիներով ու վանքերով, իբրև կաթողիկոսի աթոռանիստ, հայոց ազգի մտավոր մայրաքաղաքն է. այդտեղ է գտնվում Հայաստանի բարձրագոյն դպրոց—Ճեմարանը: Տրգատը պարսից կրօնի դէմ քրիստոնէութեան վարած կռիւն մի նոր հիմք և զօրեղ ազդանշան (լուսնայ) ստեղծեց Արշակունհաց տոհմի համար, որ Պարսկաստանում տեղի ունեցած դինաստիայի փոփոխութեան շնորհիւ՝ զրկվել էր իր նեցուկից: Հռոմայեցիների օգնութեամբ տեղի ունեցած հայոց ազգային թագավորութեան վերակազմվելը առիթ տվեց Պարսկաստանի Սասանեան տոհմի արքայ Նարզէհին պատերազմ հրատարակելու Հռոմի դէմ. սակայն Դիոկղետիանոս ցեղար Գոլբերիոսից յաղթվելով, Նարզէհը ստիպվեց հաշտութիւն խնդրել, որի հետեանքը վերին աստիճանի նպաստավոր եղավ Հռոմի համար: Հայաստանը դրվեց Հռոմի պաշտպանութեան ներքոյ: Տիգրիսի վերին հոսանքը պէտք է կազմէր այնուհետև պարսից սահմանը, բայց այն պայմանով, որ հռոմայեցիների ձեռքը պէտք է անցնէին դրանից դուրս գտնվող մի քանի հայկական և պարսկական սահմանաշրջանները—արևմտեան կողմից Ինգիլենէն¹⁾ և Սօֆենէն, արևելեան կողմից՝ Արսանենէն²⁾, Կորդվաց և Մոկաց երկրները, ինչպէս նաև Միջագետքի դաշտավայր Զարդիկենէն³⁾. «այդ մասը մի լեռնոտ առաջավոր երկիր է, որ լեզվակի ձևով տարածված էր Հայաստանի և Միջագետքի միջև մինչև Ասորեստան և այն յատկութիւնն ունէր, որ կարող էր թէ սպառնալ Պարսկաստանին և թէ հռոմէական սահմանը պաշտպանել»:

Սակայն այս սահմանակից երկրները հռոմայեցիների օրինական գավառական վարչութիւններին չստորադրվեցին, այլ թոյլ տրվեց, որ դրանք կառավարվեն արդէն եղած, բնիկների համար սովորական դարձած, վարչական ձևով: Այդ երկրներն, իբրև հռոմէական պետութեան սատրապութիւններ, հռոմայեցիների վարչութեան մէջ ինքնուրոյն և տարօրինակ ձևը կազմեցին:

1) Անգեղ տուն ? Ծ. Թ.

2) Աղձնիք: Ծ. Թ.

3) Ծավդէայք ? Ծ. Թ.

Հայաստանը հենց սկզբից շատ թույլ կերպով կապակցված ավատական պետութեան պատկեր էր ներկայացնում, որ կարելի է համեմատել շոտական տոհմական պետական կազմի հետ: Երկիրը բարձր լեռներով պարփակված, յաճախ վերին աստիճանի արգավանդ, բազմաթիւ հարթավայրերից բաղկացած լինելով, իր բնութեան համապատասխան՝ բաժանված էր մեծ և փոքր, ցեղական տարրերով թիւններով և բարձունքներով միմեանցից անջատված, շատ գավառների: Այդ գավառների գլխավորներն էին հաւաքակ, ընդարձակ կալվածների տէր, զօրեղ ժառանգական տոհմական իշխանները և ցեղապետները, որոնք իրանց շրջաններում իշխում էին համարեա անկախ և անսահմանափակ կերպով: Քաղաքական իշխանութիւնն իրապէս ավելի այս մեծ ազնվական տոհմերի ձեռքումն էր, քան թէ մեծ մասամբ դրանցից կախումն ունեցող թագավորի, չնայելով որ հայ թագավորները պարսից տիրապետողներին նմանվելով՝ իրանց մեծ արքայ էին կոչում: Հայաստանի արտաքին թուլութիւնը և ներքին յաճախակի խառնաշփոթութիւնները բացատրվում են հաւ այդ տոհմական վարչութեամբ, ինչպէս որ ճիշտ նկատել է Կ. Գիւտէրբուխը, որից և օգտվում ենք այստեղ: Պէտք է ենթադրել, որ խաղերի ժամանակն էլ նոյնը պիտի լինէր, միայն թէ այդ միջոցին պետութեան կայունութիւնը պահպանվել է, ըստ երևոյթին, աստվածապետական կենտրոնացման և իշխողների եռանդի շնորհիւ: Վերոյիշեալ տոհմական իշխանների տեղական զանազան անունները յոյներն ու հռոմայեցիք արտայայտել են սատրապ բառով, ահա այդպիսի սատրապների ձեռքը մնացին, 297 թ. կնքված հաշտութեամբ, հռոմայեցիներին զիջած երկիրները: Դէռկղետեան խաղաղութիւնը տեղի քառասուն տարի: Սակայն Նարզէի թոռը, զօրեղ Շապուր ¹⁾ II (306—379 թ. Բ. յ.) աշխատեց իր նախնիքների՝ հռոմայեցիներից կրած նախատիրքը ջնջել: Շապուրի սկսած պատերազմն տնդհատ շարունակվեց Կոնստանդին Մեծի որդոց կառավարութեան ժամանակ և Յուլիանոս Ուրացող կայսրի փայլուն կերպով սկսած պատերազմը շատ դժբախտ ընթացք ստացավ, որովհետեւ հակառակ կողմի ոյժը բանի տեղ չդրվեց և ըստ երևոյթին ռազմական սխալմունքներ տեղի ունեցան. կռիւներից մէկում Յուլիանոսը սպանվեց և այդպիսով պատերազմը ճակատագրական ընթացք ունեցավ հռոմայեցիներին համար:

3) Դասարան: Մ. Թ.

Պատերազմից նահանջող հռոմէական զօրքերի նեղ դրու-
թիւնը ստիպեց Յուլիանոսի յաջորդ Յովիանոս կայսրին մի-
արտաքոյ կարգի անպատվաբեր հաշտութիւն կնքել պարսիկ-
ների հետ: Պարսիկներին յետ պէտք է տրվէր Դիոկղետիանոսի
ժամանակ հռոմայեցիների ձեռք բերած սահմանակից երկիր-
ների մեծ մասը,—մինչև իսկ Ինգրիենէն և Սօֆենէն: Հռոմ-
յեցիք ստիպված էին նաև ձեռք վերցնել Հայաստանից և Նրա-
թագավոր Արշակ III-ից, որ թէև իրանց դաշնակիցն էր, սա-
կայն նրա հաւատարմութիւնը յամենայն դէպս շատ կասկա-
ծելի բնավորութիւն ունէր: Արշակին կուրացրին, արծաթեայ
կապանքներով շղթայեցին և «Մոռացութեան-ամրոցում» բան-
տարկեցին, որտեղ նա մի գանի տարի յետոյ, իր որդի Պա-
պի թագավորութեան ժամանակ, ինքնասպան եղավ: Շապուրը
կատաղութեամբ կրակի ու սրի մատնեց Հայաստանը և բազ-
մաթիւլ քրիստոնեաներ չկամենալով նրա կարգադրութեան
համաձայն զրազաշտական կրօնն ընդունել՝ մարտիրոսական
մահով մեռան: Արքայազն Պապը, որ Հռոմի հովանավորու-
թեան տակ էր գտնվում, Վաղէս կայսրի համաձայնութեամբ՝
հայոց մեծամեծներից թագավոր ընտրվեց մօտ 369 թ. Գ. յ.
(Ամիանոս Մարկելինոս XXVII, 12, 9): Վաղէսն ուզում էր
Յուլիանոսի կնքած հաշտութեան ծանր սխալները կրկին ուղ-
ղել: Հայաստանում Արշակունեաց տոհմի այս կրկին վերա-
կանգման խնդրում մեծ մասնակցութիւն ունեցավ Ներսէս կա-
թողիկոսը, հայոց երկրի քրիստոնէութեան երկրորդ մեծ պաշտ-
պանը: Սա էր Պապին քրիստոնէական օծումն տվողը: Բայց
որովհետև Պապը ամեն տեսակէտից անվայել կեանք էր վա-
րում, շուտով լուրջ տարաձայնութիւններ սկսվեցին այդ եր-
կուսի մէջ, որի հետևանքն այն եղավ, որ Պապ թագավորը կա-
թողիկոսին անձամբ սպանեց: Նա իր ձեռքով, ըստ երևոյթին
իբրև հաշտութեան նշան, առաջարկեց կաթողիկոսին թունա-
վորված ըմպելիք, որից անմիջապէս մահացավ Ներսէս Մեծը:

«Պետությունն իր վերջին լավ շրջանն հղալ ազնվականներին պարագլուխ կղերական Մանուէլ Մամիկոնեանին իշխանապետութիւնը», որովհետեւ 387 թ. Ք. յ. Թէոդոս Մեծ կայսրը Հայաստանը բաժանելով երկու մասի՝ մէկ մասին ինքը տիրացալ, իսկ միւս մասը տվեց պարսից թագաւոր Շապուր III-ին։ Երկրի արեւելեան միւս բաժինը, որ ամբողջի համարեա չորս հինգերորդական մասն էր կազմում, պարսից գեորշխանութեան տակ ընկալւ, այն ինչ արեւմտեան փոքր բաժինը, Վարին (Թէոդոսուպոլիս, այժմեան Էրզրումը) գլխաւոր բաղաբով ճանաչ-

վեց իբրև հռոմէական ազդեցութեան տակ գտնվող երկիր: Այս բոլորը տեղի ունեցավ, երբ արդէն պարսիկներն ու հռոմայեցիք ուղղակի գրավել էին Հայաստանի որոշ մասերը:

Երկու մասերումն էլ սկզբում Արշակունի անվանական թագավորներ կարգվեցան. Արևելեան մասում, որ այնուհետև Պարսկա-Հայաստան կոչվեց, զբանց տեղը բռնեցին, 428 թ. սկսած, պարսից սահմանների նահանգապետները (մարզպանները), որոնք յաճախ բնիկ տեղական ազնվականներն էին լինում. առհասարակ այդ միջոցին պարսիկներն արտաքոյ կարգի մեծ ակնածութեամբ էին վերաբերվում Հայաստանին: Հռոմէական բաժնում Արշակունի անվանական թագավորութիւնը վերջացավ արդէն՝ Թէոդոսից կարգված Արշակ IV-ի մահից յետոյ:

Հռոմէական Մեծ Հայաստանը (Armenia magna) անմիջապէս կայսրի իշխանութեանը ենթարկվեց, այդ պատճառով էլ վերջինս կրում էր Comes Armeniae անունը: Թէոդոս կայսրը Փոքր Հայքն էլ, որ Դէոկղետիանոսի ժամանակ Մելիտինէ գլխավոր քաղաքով — այժմեան Մալաթիան — առանձին ինքնուրոյն նահանգ էր կազմում, երկու մասի բաժանեց. այս մասերը կոչվեցան Առաջին և Երկրորդ Հայք: Առաջինը Սեբաստիա (այժմ Սվազ) և Սատալա (Շատաղ) գլխավոր քաղաքներով՝ կազմվեց ինն նահանգի հիւսիսային մասից. իսկ երկրորդը՝ Մելիտինէ քաղաքով՝ կազմվեց նրա հարավային մասից — ավելացնելով նաև Կապադովկիայի մի քանի շրջանները: Իսկ շատորպապութիւնները՝ պարփակում էին Սօֆենէն և Ինգիլենէն, որոնք Յովիանոսի խաղաղութեան շնորհիվ հռոմայեցիներին էին մնացել և ապա այն չորս շրջանները, որ Թէոդոսն առանձնացրել էր Մեծ Հայաստանի բաժանման միջոցին. զբաժն էին Անգլիտենէ ¹⁾, Աստիանենէ ²⁾, Սօֆանենէ-Մարտիրոպոլիս ³⁾ (այժմեան Մուֆարդին) գլխավոր քաղաքով և Բալաբիտենէ ⁴⁾ գավառները:

Սօֆանենէ, Սօֆենէ գավառների և Մարտիրոպոլիս քաղաքի մասին հետագայում ավելի մանրամասն կիսուենք:

Հայկական յարաբերութիւնների նոր կարգավորութեանը ձեռնարկեց կայսր Յուստինիանը. այդ մասին մենք ավելի ճիշտ

տեղեկութիւններ ունենք Corpus juris-ի շնորհիւ: Ամենից առաջ Մեծ Հայաստանը բացառիկ դրութիւնից հանվելով՝ դարձավ հռոմէական նահանգ: Յետոյ 536 թ. մարտ ամսին 31 նոյեմբերի վերացվեց սատրապութիւնների վարչութիւնը և նախկին սատրապութիւնները իբրև նահանգ՝ կազմեցին «չորրորդ Հայքը». միւս երեք «Հայք»-երի անուններն էլ փոփոխութեան ենթարկվեցին: Այնուհետև Մեծ Հայաստանը կոչվեց «Առաջին Հայք», իսկ «Առաջին» և «Երկրորդ» Հայքը, որ Փոքր Հայքի նահանգներն էին, կոչվեցին «Երկրորդ» և «Երրորդ» Հայք: Միաժամանակ մասամբ փոփոխութեան ենթարկվեց նաև այդ նահանգների նախկին բաժանմունքը:

Ամբողջ Հայաստանի երկու մասի բաժանումը — բիւզանդական-արևելեան հռոմէական և պարսկական — ընդհանրապէս պահպանվեց, թէև պարսից բաժնում յաճախակի տեղի էին ունենում ապստամբութիւններ՝ յօգուտ բիւզանդացիների: Միայն երբ վտարված Սասանեան խորով Պարվէ արքան, Մօրից կայսրի շնորհիվ, իր պետութեան ղեկը կրկին ձեռքն առավ, իր խոստման համաձայն՝ խաղաղ կերպով իր հովանավորին ղիջեց պարսից Հայաստանի մի մեծ մասը: Մօրից կայսրի մահից յետոյ, 602 թ., թէև խորովը կրկին յետ գրավեց իր ղիջած երկիրը, սակայն Հերակլ կայսրը (610—641) շատ պատերազմներում յաղթեց պարսիկներին, յետ խլեց նրանց գրաված երկրները և 630 թ. խաղաղութիւն կնքելով նրանց հետ՝ վերականգնեց 591 թ. սահմանները:

Երբ 641 թ. մեռավ Հերակլ կայսրը, արաբացիները պարսիկներին յաղթելուց յետոյ, սկսեցին յաճախակի արշավել Հայաստանի վրայ և վերջապէս — մասամբ նոյն իսկ հայերի հրաւիրելով տիրեցին ամբողջ երկիրը 654 թ. և յոյների հետ երկար պատերազմներից յետոյ Հայաստանի լիակատար տէրը դարձան: «Խալիֆների տիրապետութեան առաջին դարը, չնայելով ավերիչ պատերազմներին, հանդիսացավ Հայաստանի ազգային և գրականական ծաղկման մի ժամանակաշրջան: Սակայն Աբասիդների ժամանակ երկիրը սաստիկ ճնշված էր արաբական կուսակալների ձեռքով: Այս ճնշումն առաջացրեց հակաշարժում, որի հետեանքն եղավ Հայաստանի պետական և քաղաքակրթական վերջին ծաղկման ջրջանը: Բագրատունեաց (որոնք անճշտութեամբ իրենց հրէական ծագումից առաջացած էին համարում) նշանավոր տոհմից սերած մի հայ իշխանի յաջողվեց 855 թ. Գ. յ. դառնալ «Իշխանաց իշխան» և 885 թ. խալիֆից արքայական թագ ստանալ: Նոր հիմնած թագավոր

¹⁾ Հանձիթ: Ծ. Թ:

²⁾ Հաշտեանը կամ Հաշտենից գավառ: Ծ. Թ:

³⁾ Մարտիրոսաց քաղաք կամ Նիբիկերտ: Ծ. Թ:

⁴⁾ Բալահովիտ, Բալու: Ծ. Թ:

ըութիւնը Հայաստանի սահմաններից անցնելով՝ պարփակեց նաև Արաքսի և Կովկասի միջև գտնվող երկիրը (Աղվանից երկիրը, ավելի արևելեան կողմը՝ մինչև Կասպից ծովը) և Վիրքը (վրացիների երկիրը Արևմուտքում)։ Բագրատունիների իշխանութեան և փառքի ճարտարախօս վիճանքն են հանդիսանում դեռ այսօր ևս արքայանիստ Անի քաղաքի ավերակները, որ այցելեց դր. Բէլքն իր առաջին ճանապարհորդութեան միջոցին և որի ճշգրիտ նկարագրութիւնն է տալիս Լիմբը նորերս Հայաստանի մասին հրատարակած իր գեղեցիկ, ամբողջովին իր անձնական դիտողութիւնների վրայ հիմնված՝ երկհատոր աշխատութեան մէջ։ Սակայն Հայաստանի միութիւնը բազրատունեաց իշխանութեան ներքոյ՝ երկար չտևեց։ Երկրի լիոններով կտրուված լինելու բնութիւնը և նշանավոր ազնվական տոհմերի անկախութեան ձգտումը նորից պատճառ եղավ հէնց այն միջոցին, երբ Բագրատունիները 913 թ. խալիֆայից ձեռք բերին երկրի լիակատար անկախութիւնը՝ հարկատվութիւնից ազատվելով—որ Հայաստանում Բագրատունեաց թագավորութեան հետ զուգընթացաբար առաջացան ինքնուրոյն և անկախ մասնակի պետութիւններ. դրանց մէջ նշանավոր հանդիսացան Վասպուրականի Արծրունիները, որոնց արքայանիստն էր Վանը. այսպիսով այդ քաղաքն երկրորդ անգամ դարձավ պետութեան մայրաքաղաք և այս անգամ հայոց ազգային թագավորութեան։

Սակայն արևելքից ներս խուժող սելջուկների երկիւղից տառն և մէկերորդ դարում, իրենց երկիրները թողին արևելեան հռոմայեցիներին՝ նախ Արծրունիների վերջին թագավոր Սենեքերիմը 1021 թ. Ք. յ. և յետոյ՝ Բագրատունեաց վերջին արքայ Գագիկը 1045 թ.։ Սակայն արևելեան հռոմայեցիներն ևս չկարողացան դիմադրել սարսափելի վտանգին։ Սելջուկեան հօդաւանդի գործած սխտեմատիկ և դաժան ավերմունքները Հայաստանում վերջ դրին հայերի քաղաքական և քաղաքակրթական կեանքին՝ իրենց բուն հայրենիքում։ Իսկ ինչ որ անվաւթողին սելջուկները, ոչնչացրին մօնղոլները։

Սելջուկեան պատերազմների ժամանակ բազմաթիւ հայեր ապաստանեցին Տավրոսի և Կիլիկիայի կողմերը։ Այդտեղ 1080 թ. Ռուբէնը, որ հավանականօրէն Բագրատունի էր, հիմնեց մի փոքրիկ իշխանութիւն, որի մայրաքաղաքն էր Սիւլ։ Ռուբինեան հարստութեան այս ազգային պետութիւնը, որ Հայաստանից դուրս էր գտնվում և 1198 թ. Լևոն II-ի թագադրութեամբ դարձաւ թագավորութիւն, որոշ գեր խաղաց խաչակրաց

պատերազմների ընթացքում և խաչակիրների հիմնած պետութիւնների հետ ունեցած սերտ միութեամբ։ Ռուբինեան թագավորութիւնը, որ իր ներքին կազմակերպութեամբ մի կիսա-ֆրանսիական ավատական պետութիւն էր, 1342 թ. անցավ Կիպրոսի, Ռուբինեանների հետ խնամիացած, Լուսինեան տոհմի ձեռքը, բայց տապալվեց եգիպտական մամեուկների ձեռքով։ Կիլիկիայի Լուսինեան վերջին թագավոր Լևոն VI մեռավ Փարիզում 1321 թ.։ Այնուհետև այլ ևս Հայաստանն երբեք ինքնուրոյն պետութիւն չեղավ։ Էպպէս հայկական միութիւնը դեռ ևս շարունակվում է միայն եկեղեցական շրջանում։ Հայոց եկեղեցին դավանաբանական տեսակէտից բաժանված լինելով օրթօդօքս յոյն եկեղեցուց որոշ և միշտ վիճարանութեան առարկայ եղած կէտերով—ամենից առաջ Քրիստոսի բնութեան լիակատար միութեան ուսմունքով—իր կազմակերպութեամբ մի բոլորովին ինքնուրոյն պատկեր է ներկայացնում։

Ձանց ենք առնում հռոմէական-կաթոլիկ դավանութիւնն ընդունած հայերին. կաթոլիկ հայեր են նաև Միսիթարեանները, որոնք մեծ ծառայութիւն են արել հայերին՝ նպաստելով նրանց դարգացմանը և հրատակելով նրանց գրականութիւնը։ Վենետիկի մօտ եղած Ս. Ղազարի հրաշագեղ կղզու վրայ է գտնվում Միսիթարեանների մայր վանքը, որտեղ հայերէն սովորեց Լօրդ Բայրօնը։ Սակայն բոլոր «գրիգորեան» հայերը իրրե իրանց եկեղեցական պետ են ճանաչում Ռուսա-Հայաստանի էջմիածնում գահակալող կաթողիկոսին։ Եթէ մակերեւութապէս դիտենք, այստեղ ևս պէտք է ժխտենք միութիւնը, որովհետեւ թէ Կիլիկիայի Սիւ քաղաքում և թէ Վանայ լճի Աղթամար կղզու վրայ այսօր ևս գոյութիւն ունին մի մի անվանական կաթողիկոսութիւններ։ Առաջինը ծագում է յայտնապէս Ռուբինեանների ժամանակներից, մինչդեռ Աղթամարի կաթողիկոսութիւնը, որ իբրեւ թէ 1113 թվից անընդհատ յաջորդութեամբ միևնոյն տոհմի ժառանգութիւնն է մնացել, հոգևոր շրջանում արտացոլում է Վասպուրականի նախկին ինքնուրոյնութեան ժամանակները՝ Արծրունիների իշխանութեան ներքոյ։ Սակայն իսկապէս այս երկու կաթողիկոսութիւնները ոչ այլ ինչ են, եթէ ոչ գաղառական արքեպիսկոպոսական թեմեր՝ կաթողիկոսական տիրոջ սով. դրանց միակ առավելութիւնն այն է, որ էջմիածնի կաթողիկոսի նման կարող են նոյնպէս մեռն օրհնել։ Էջմիածնի կաթողիկոսին, իբրեւ հայոց միութիւն կազմող եկեղեցու պետին, անմիջապէս ենթարկվում է միայն Ռուսա-և Պարսկա-Հայաստանի հայ հոգևորականութեան։

թիւնը, մինչդեռ Տաճկա-Հայաստանի համար իբրեւ միջնորդ ինստանցիա է հանդիսանում Կոստանդնուպոլսի պատրիարքը— որ մեր էքսպեդիցիօնի յաջողութեանը նպաստեց Տաճկաստանում:— Պատրիարքը, հայոց եկեղեցու տեսակէտով, կաթողիկոսի ստորագրեալն է. նորեւս ընտրված կաթողիկոս իզմիր-յեանը առաջ պատրիարք էր: Բայց որովհետեւ կաթողիկոսի հաստատութիւնը կախումն ունի ռուսաց կառավարութիւնից, մինչդեռ պատրիարքը Բարձրագոյն Դրանը հաճելի և որոշ տեսակէտով պատասխանատու պաշտօնեայ պէտք է լինի, այդ պատճառով և իրապէս պատրիարքը նշանաւոր չափով ինքնուրոյնութիւն ունի: Միւս կողմից էլ երբ 1903 թ. ռուսաց կառավարութիւնը խից հայոց եկեղեցական գոյքերը, վրդովից ոչ միայն Ռուսա-Հայաստանի հայ ժողովուրդը ու հոգևորականութիւնը, այլ որովհետեւ էջմիածինը կենտրոնական նշանակութիւն ունի, որ ընականաբար ֆինանսական հանգամանքների վրայ ևս ազդում է, բոլոր հայերի ազգային զգացմունքը խորապէս յուզվեց. այդ կարգադրութիւնը ռուսաց կառավարութիւնը յետ վերցրեց կարճ ժամանակից յետոյ, 1905 թ. ռուսապետական խաղաղութիւնը կնքված միջոցին:

Մեր էքսպեդիցիօնին յաջողվեց լուծել այն հարուստ բովանդակութիւն ունեցող խնդիրների մեծ մասը, որոնք, ինչպէս ցոյց է տալիս մեր ներկայացրած համառօտ տեսութիւնը, հայկական հողի վրայ սպասում են պատմական և պատմա աշխարհագրական հետազոտութեան:

Ամենից առաջ շատ բավարար հետեանք ունեցավ մեր գլխավոր նպատակի իրագործումը:

Համարեա բոլոր խաղաղական բեվեռագիր արձանագրութիւնները, որոնք առաջուց արդէն յայտնի էին—շատ չնչին բացառութեամբ—նորից համեմատվեցին և ավելի լավ ու որոշ կարգացվեցին այս հանգամանքը էապէս նպաստեց արձանագրութիւնների բովանդակութիւնը ճիշտ հասկանալուն: Նոր գտնված արձանագրութիւնների—մասամբ պատմական մեծ կարևորութիւն ունեցող—թիւն այնքան մեծ էր, որ այդպիսով հավաքված նիւթն ավելի քան կրկնապատկվեց: Բացի գրավոր պատճէններից վերցրինք նաև այդ արձանագրութիւնների թղթէ գրոշմները և կարևոր դէպքերում նոյն իսկ լուսանկարները: Խաղերի նշանավոր ժայռաքերքերը հետազոտեցինք, լուսանկարեցինք և չափերը վերցրինք. պեղումներով երևան հանեցինք խաղական քաղաքակրթութեան մի գլխավոր վայրը, Թօպրաք

կայէի արքայանիստը վանի մօտ, որի մեծ մասամբ հայրենի երկրում պահված արդիւնքները բազմակողմանի կերպով պարզաբանեցին Սալգերի քաղաքակրթութիւնն ու ծագումը:

Նոյնպէս ասորական, յունական և սեմիտական էական նշանակութիւն ունեցող արձանագրութիւններ գտանք. ըստ կարելոյն պարզաբանեցինք մեր ճանապարհորդած ամբողջ շրջանը՝ աշխարհագրական տեսակէտից, որ համապատասխանում էր պրոսական թագավորական գիտութեանց ճեմարանի և Համբուրգի աշխարհագրական ընկերութեան առանձին ցանկութիւններին:

Տասը հազար յոյների դարմի ճանապարհի հետազոտութեան արդիւնքը էապէս տարբերվում է ցայժմ տիրող հայեացքներից, բայց ավելի ճշտութեամբ համապատասխանում է Քսենոֆօնի տված տեղեկութիւններին: Տիգրանակերտի տեղի խնդրի լուծումը գտնվեց՝ համեմատելով այն վայրի հետ, որի օգտին արդէն Մօլտէն, հարկավ միայն անցողակի այցելութեան միջոցին, կարծիք էր յայտնել: Տարի ու կէս մնալով Հայաստանում՝ ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ մենք պէտք է բազմաթիւ տպավորութիւններ ստանայինք այդ երկրի այժմեան հանգամանքների մասին, եթէ նոյն-իսկ հնագոյն ժամանակներն ու ներկան միմեանց հետ այնպէս սերտ կերպով կապված չլինէին Հայաստանում:

Ներքին և արտաքին պատճառներից ստիպված չենք կարող մեր ճանապարհորդութեան հետեւալ նկարագրութեան միջոցին հետեւել ամեն մի առանձին ուղևորութեան պատահական դիպվածներին և զանազան հանգամանքների պատճառով անկանոն կազմակերպված ընթացքին: Առանձնապէս պէտք է շեշտեմ, որ չեմ տալիս ամբողջ ճանապարհորդութեան նկարագրութիւնը, այլ միայն այն ուղևորութիւններին, որոնց ես մասնակից եմ եղել կամ միայն ինքս եմ կատարել. չեմ նկարագրել ուղեկցիւ առանձին ճանապարհորդութիւնները: Իմ և ուղեկցիւ հիմնական ըմբռնումների տարբերութեան պատճառով՝ մեր ճանապարհորդութեան հետեւանքների և գիտական արժէքի մասին այստեղ արտայայտված մտքերն ու դիտողութիւնները միմիայն ինձ պէտք է վերագրել:

Սակայն, որպէս զի ընթերցողի համար պարզ լինի մեր ամբողջ ճանապարհորդութեան կարևոր անհրաժեշտ պատկերը թէ ըստ ժամանակի և թէ ըստ բովանդակութեան կենդրոնացման—նախապէս մի համառօտ ժամանակագրական ակնարկ ձգենք մեր ուղևորութեան ամբողջ ընթացքի վրայ:

Մեր էքսպոզիցիոնը Ռուսա-Հայաստանում ճանապարհորդ-
դեղուց և Ուրմիոյ լճի չորս կողմը ձիով շրջագայելուց յետոյ—
ինչպէս որ մանրամասն նկարագրված է այս հատորի մէջ—ան-
ցավ պարսկա-տաճկական սահմանը՝ Բաշկալայի վրայով և հա-
սով Վան 1898 թ. հոկտեմբերի 12-ին: Վանում մենք ամերի-
կական միսիօնի գլխավոր դր. Ռայնօլդի և իր ամուսնու սի-
րալիր ավակցութիւնն ու ցանկալի հիւրասիրութիւնը գտանք:
Թէև մենք Ռայնօլդի վերին աստիճանի մարդասէր գործունէու-
թեան մասին մանավանդ իննսնական թվերին այնպէս թշուառ
կերպով կենադրով եղած հայերի այրիների ու որբերի նկատ-
մամբ՝ ավելի մանրամասն կիսօսենք երկրորդ հատորում, բայց
և այնպէս այստեղ ևս պէտք է շեշտենք այդ՝ ի նկատի ունե-
նալով, որ նորեքս գերմանական մի նշանավոր լրագրում տա-
րաբախտաբար բոլորովին անճիշտ նկարագրութիւն լոյս տե-
սավ— երեւի անբավարար և կարճ ժամանակի ընթացքում հա-
վաքած տեղեկութիւնների հիման վրայ—այս անշահասէր, բազ-
մադրիւն և ինքնագոհութեան արիւթիւն ունեցող մարդու մա-
սին: Միսիօնների կրօնա-քաղաքական գործունէութեան մասին
տարբեր կարծիքներ կարող են լինել, բայց որ դր. Ռայնօլդը
ամեն տեսակէտից իմաստուն չափավորութեան է հետևում, որ
նա հասարակական շրջանում անբավ բարիքներ է առաջացրել
և դեռ այսօր էլ նոյնն է շարունակում,—այդ կարող են վկայել
գործին տեղեկ բոլոր մարդիկ՝ թէ թուրքերն ու հայերը, թէ
գերմանացիներն ու ամերիկացիները միաբան:

Վանից մինչ յաճախ ավելի մեծ ուղևորութիւններ էինք
կատարում հետազոտութեան նպատակով: Մինչդեռ իմ ուղե-
կիցը հիւսիսային կողմից թի պտոյտ ձեռնարկեց Վանայ լճի
շուրջը, որ հարկավ շուտով ընդհատվեց, որովհետև էս ևն-
թարկվեց բրդերի յարձակման Սիփան Դաղի վրայ և քիչ էր
մնում, որ կեանքն էլ կորցնէր: Ես դիմեցի զէպի արևելք, զէպի
Քեշիշ գետ և էրչէկ լիճը (հոկտեմբերի 9—17):

Քրդերի վերոյիշեալ յարձակման հետևանքն այն եղավ, որ
այնուհետև մեր ուղևորութիւն՝ երի միջոցին թիւրք կառավա-
րութեան կողմից, բացի սովորական ոստիկան զինվորներից
(զապտիէ), մեզ ուղեկցում էին կանոնավոր հեծելազօրքի զին-
վորներ: Առաջին անգամ հետազոտեցինք արևելեան Տիգրիսի
(Բօհտան-սու) ակունքների շրջանը և Վանայ լճից զէպի հարավ
գտնվող, վայրենի հերոսի-քրդերով բնակված Նօրդուզ, Շատախ
և մոկք լեռնագավառները. վերադարձին հետազոտեցինք Մե-
նուաս-Ջրանցքը՝ ակունքից սկսած մինչև Վան (հոկտեմբերի 27-ից

մինչև նոյեմբերի 15): Մեր վերադարձից յետոյ մեր ծառայ և
թարգման Փարաջին ուղարկեցինք Վանայ լճի հիւսիսային կող-
մերը, որպէս զի գտնի և թղթէ դրոշմով վերցնէ այնտեղ եղած
արձանագրութիւնները (հոկտեմբերի 26-ից մինչև նոյեմ-
բերի 19), իսկ մենք զբաղվեցինք Վանի մօտ գտնված Սալ-
դերի ամրոց Թոփրաքիլայէի պեղումներով՝ Ռուզօլֆ Վիրխով-
հաստատութեան առանձին նիւթական միջոցների օժանդակու-
թեամբ:

1899 թ. յունվարին պէտք է լրանար մեր ճանապարհոր-
դութեան համար հաշված ութ ամիսը և նիւթական միջոցներն
էլ պէտք է սպառվէին, մինչդեռ մենք հաստատ հիմք ունէինք
կարծելու, որ շատ կարևոր է ճանապարհորդութեան շարու-
նակութիւնը զէպի հարավ և արևմուտք: Այդ պատճառով Ռու-
զօլֆ Վիրխովը յունվարի 9-ին հրատարակեց մի կոչ, որի մէջ
ասված էր. «հետազոտութեան այդ տեսակի համար առանձնա-
պէս նախապատրաստված երկու գիտնականներին հայրենիքը
պէտք է օժանդակէ, որպէս զի դարձեալ մի հինգ-վեց ամսվայ
աշխատանքի ծախքերը հոգացուեն». այս կոչը հասավ իր
նպատակին և հավաքվեց 15,125 մարկ:

Վիրխովի այս առաջին կոչին յաջորդեց երկրորդը, յուլիսի
22-ին, որ նոյնպէս յաջող հետևանք ունեցավ: Սակայն զբանից
յետոյ ևս դեռ պէտք է բավականին մեծ գումար ձարէինք, որով-
հետև մեր ճանապարհորդութեան ժամանակ գտնված ու գնված
հնութիւնները և արձանագրութիւնների դրոշմերն Եվրոպա ու-
ղարկելը՝ մեր ճանապարհածախքի հետ միասին (մօտավորապէս
200 արձանագրութիւնների երկ-երկու դրոշմերը) նստում էր
մօտ 80,000 մարկ: Մնացած գումարը ձարելուն էապէս օժան-
դակեց, մեր էքսպոզիցիոնի վերադարձից յետոյ, 1900 թ. փետր.
28-ին, Ռուզօլֆ Վիրխովի՝ երկու ճանապարհորդներիս հետ
միատեղ «մտերմաբար» հրատարակած շրջաբերական գրու-
թիւնը: Այդ գրութեան մէջ յիշատակված և մեր հրատարակու-
թիւնների համար ընդհանուր աշխատանքով կազմած ծրագիրը՝
վերջը չիրագործվեց:

Ռուզօլֆ Վիրխովի հրատարակած առաջին կոչից յետոյ
արդէն միջոց ունենալով մեր ճանապարհորդութեան ծրագիրն
ընդարձակելու, 1899 թ. փետրվարի 15-ին ճանապարհ ընկանք
զէպի Միջագետք հեծելազօրքի ուղեկցութեամբ (էյալընանտ
Ջեմալ էֆէնդու առաջնորդութեամբ 16 զինվոր և մի ֆելդվերէլ):

Մեծ ջանք գործ դնելով հարթեցինք մեր ուղին ամբող-
ջովին ձիւնով ծածկված լեռնաշղթաների ու անցքերի միջով

Տաղաւանի և Սօրպի վրայով դէպի Բիթլիս (փետրվարի 22-ին), այդտեղից (փետրվարի 28-ին) դէպի Սեօօրտ, որ առաջին արաւական քաղաքն է իսկական Միջագետքում (մարտի 2): Սեօօրտից, որտեղ եւս հիվանդ պառկած էի, ուղեւորութիւններ կատարեց իմ ուղեկիցը դէպի Բեդլան և Հասան-կէֆ, արեւմտեան Տիգրիսի վրայ: Այնուհետեւ Տիւ. Ֆինիկի վրայով անցանք դէպի Զեզիրէ (մարտի 16) և արձանագրութիւններով նշանավոր Բաբել քրդական գիւղը. յետոյ Պեշխաբուրի մօտ Տիգրիսն անցնելով, Սիմէլի վրայով և Յաւօ լեռներէ մօտով դէպի Նինուէ և Մօսուլ (մարտի 24): Ապա Զարիմճայի վրայով դէպի Նիմրուդ, հին Կալախի տեղը, (մարտի 31), յետոյ դէպի մեծ Յար և «Նգուր»-լեռնանցքը—մի հին ասորական շինութիւն, որի շնորհիւ գետից ջրանցք անցկացրին դէպի Կալախ—և Գվէրի վրայով անցնելով մեծ Յարը, Տէլ գաղիւր բլրի մօտով, որ իր մէջ պարունակում է ասորական Կակցի բանակետի ավերակները, դէպի Արբէլա (ապրիլի 2): Այդտեղից Ռովանդուդի և Սիդիկանի վրայով դէպի զեռ այսօր էլ իր սկզբնական տեղում գտնվող, Տօպցաուէ գիւղի մօտ եղած խալդերի թագավոր Ռուզաս 1-ի երկլեզվեան կոթողը, որի արձանագրութիւնը Տաճկական հողի վրայ գտնված խալդական արձանագրութիւններից ամենահարաւայինն է: Պարսկաստանում ճանապարհորդելու միջոցին Քելիշին լեռնանցքի վրայ (1898 թ. սեպտեմբերին) գտնվելով՝ մենք միայն երեք ժամվայ ճանապարհ հեռու էինք այս կոթողից, սակայն քրդերի պատճառով չէինք կարող Պարսկաստանից Տաճկաց սահմանն անցնել և տեսնել կոթողը:

Մինչ մենք Տօպցաուէ գիւղում սաստիկ զբաղված էինք կոթողի խալդական և ասորական արձանագրութիւնների բնագիրներէ ընթերցանութեամբ և ֆնացինք այդտեղ ապրիլի 8-ից մինչև 19-ը, ուղեկիցս հեռագիր ստացավ Վանայ Վալիից, որով կանչվում էր՝ Սիփան Դադի վրայ իր վրայ յարձակվող քրդերի դէմ դատ վարելու համար. դրանից յետոյ մեր էքսպեդիցիօնի երկու ուղեկիցներս բավական երկար ժամանակ միմեանցից բաժանված ֆնացինք: Ուղեկիցս վերադարձավ Վան Դիցէի, Նեերիի, Բաշկալայի վրայով:

Նախագծված ճանապարհորդութեան շարունակութիւնն ինձ վիճակվեց: Տօպցաուէի կոթողը կրկին անգամ դիտողութեան ենթարկելուց (1892 թ. ապրիլի 20—23) յետոյ ես վերադարձայ Մօսուլ, որտեղ Վանից մեզ ուղեկցող հեծելազօրը, սուլթանի առանձին կարգադրութեամբ, նորից իմ տրամա-

դրութեան ներքոյ դրվեց: Այնուհետեւ ես անցայ (մայիսի 6) Խորասաբադ—Էլիօշ—Պեշխաբուր—Բաբել—Միդիատ—Հասան-կէֆ—Ալմադին—Մուֆարդին—Լիշէ—Տիգրիսի լեռնանցք—Բալոր—Սարբերդ—Մալաթիա—Կեմախ—Երզնկա—Բաբերդ—Էրզրում—Հասանկալա և Ալաշկերտի Թոփրաքլաէ, որտեղ կրկին միացավ մեր էքսպեդիցիօնը 1892 թ. օգոստոսի 3-ին: Այնուհետեւ մենք միասին Կաղզվանի և Ղարսի վրայով վերադարձանք կրկին Թիֆլիս, որտեղից իմ ուղեկիցը նորից Վան վերադարձավ: Վրաստանում ես շարունակելով իմ գործը, Թողի Թիֆլիսը սեպտեմբերի 26-ին և Բաթումից նալով Տրապիզօնի ու Կոստանդնուպօլսի վրայով ուղևուկեցի դէպի հայրենիք և 1897 թ. հոկտեմբերի 20-ին հասայ կրկին Բերլին՝ համարեւ տարիուկէսվայ բացակայութիւնից յետոյ: Բերլին եկավ նաև իմ ուղեկիցը գեկտեմբերի 23-ին. նա Վանից գնացել էր Փարկին և Լիշայի մօտ դիտողութեան էր ենթարկել Տիգրիսի լեռնանցքը, յետոյ Մուշի, Կարաքիլիսայի, Դելիբաբայի, Էրզրումի, Բաբերդի, Դիւմիւշխանայի վրայով հասել էր Տրապիզօն:

Ինչպէս տեսնում է ընթերցողը, տաճկական-արեւելեան Հայաստանի հետազօտութիւնը,—որ իբրեւ խալդական պետութեան կենդրոն ամենից առաջ ի նկատի առնվեցավ խալդական արձանագրութիւնների գտնելու համար,—տեղի ունեցավ երբեմն մայրաքաղաք Վանից, իբրեւ մշտական կայանից, մինչդեռ շրջանաձև ուղիով կատարված հետազօտութիւնները համարեան թէ անընդհատ շարունակվում էին: Այդ երկուսի համար պահանջվում է հիմնովին տարբեր նկարագրութիւն, մասնավորապէս օրական դէպքերի և հետազօտութեան արդիւնքի վերաբերմամբ: Սակայն միայն այս տեսակէտը չընդունեցինք իբրեւ նիւթի բաժանման սկզբունք: Ավելի յարմար էր տաճկական արեւելեան Հայաստանի հետ—Վանի ու Բիթլիսի վիլայէթները և Էրզրումի վիլայէթի արեւմտեան մասերը—միացնել նաև տաճկական արեւելեան Տիգրիսի երկիրը—Ասորեստանն իր նեղ և ընդարձակ իմաստով վերցրած—և հիւսիսից դրան սահմանակցող տաճկական երկրի գավառները: Այդպիսով թէ պատմականօրէն և մեծ մասամբ նաև աշխարհագրա-պատմականօրէն մի ամբողջութիւն կստացվի, խալդական պետութեան միջուկին պէտք է միացնել այն երկրների հետազօտութիւնն ու ճանապարհորդութիւնը, որտեղ խալդական արքաների զօրեղ ախոյեաններ էին գահակալում և որտեղից անընդհատ պատերազմներ էին մղում ասորեստանցիները Ուրարտուի դէմ. այդ երկրումն են տեղի ունեցել յաղթական և դէպի հարավ առաջ ընթացող

խաղաղական տիրապետողների և Ասորեստանի թագավորների ամենավճռական և ամենակատաղի կռիվները: Որովհետև մենք Վան ու Տաճկա-Հայաստան հասանք ռուսական և պարսկական այն երկրներում ճանապարհորդելուց յետոյ, որոնք երբեմնեայ խաղաղական և ապա հայկական պետութեան շրջաններն էին կազմում և որովհետև ճանապարհորդութեան առաջին և ընդհանուր փորձառութեամբ հարուստ ամիսները լինելով՝ պէտք է նկարագրութեան առաջին տեղը բռնէին, այդ պատճառով տաճկական արևելեան Հայաստանի և արևելեան Տիգրիսի երկրի նկարագրութիւնը մնաց երկրորդ հատորին: Յօդուտ այսպիսի բաժանման իր նաև այն հանգամանքը, որ հէնց այդ հատվածները պատմական և արձանագրական տեսակէտից առաջնութեան հրատարակութիւնների մէջ առանձնապէս մանրամասն են մըշակվել, մինչդեռ վերջնական նշանակութիւն ունեցող արդիւնքի համար պէտք է օգտվել խաղաղական արձանագրութիւնների ամբողջական վերամշակութիւնից, որ նոր է ձեռնարկված: Երկար ժամանակ մնալով Վանում, բնականաբար մենք ձեռք բերինք բազմատեսակ և համեմատաբար ամենահիմնական հայկացիներ Հայաստանի այժմեան դրութեան մասին: Երկրորդ հատորը, բացի ճանապարհորդութիւնից և ճշգրիտ ցանկից, կունենայ նաև Հայաստանի ամենալավ—որքան կարելի է ձեռք բերել—քարտէզը:

Անգլիացի հետազոտող Հ. Լինչը հրատարակել է Հայաստանում կատարած իր երկու ճանապարհորդութիւնների արդիւնքը. առաջին ճանապարհորդութիւնը նա կատարել 1893 թ. օգոստոսից մինչև 1894 թ. մարտ ամիսը, մինչդեռ երկրորդը, թէև մենք այդ մասին տեղեկութիւն չունէինք, տեղի է ունեցել մեր ճանապարհորդութեան առաջին հինգ ամիսների ընթացքում մեղ հետ միաժամանակ (1898 թ. մայիսից մինչև սեպտեմբեր). Լինչի արդէն յիշված և գեղեցիկ երկհատոր աշխատութիւնը՝ «Armenia, Travels and Studies» լոյս տեսավ 1901 թվին: Այս գրքին կցված է մի հիմնալի քարտէզ, որ օգտվելով նախկին աշխարհագրական տեղեկութիւններից, էապէս հիմնվում է հեղինակի սեպական և նրա ուղեկից երկրաբան Ֆ. Օսվալդի հետազոտութիւնների վրայ. վերջինս նորերս հրատարակել է նաև Հայաստանի մասնագիտական-երկրաբանական քարտէզը: Պարոն Լինչը, քարտէզի հրատարակիչ պ. Ստանֆորդի համաձայնութեամբ, սիրալիւ կերպով թոյլ է տվել ինձ, որ այդ քարտէզը կցվի իմ գրքին այն պայմանով, որ մէջը նշանակվին նաև մեր էքսպեդիցիօնի ուղեգծերը և մեր

ձեռք բերած աշխարհագրական նոր տեղեկութիւնները: Թոյլ եմ տալիս ինձ այստեղ վերոյիշեալ երկու պարոններին յայտնել իմ սրտագին շնորհակալութիւնը այդ արտասովոր բարեկամական շնորհի առթիւ:

Աշխատութեանս այս առաջին հատորը պարունակում է էապէս խաղաղական մեծ պետութեան և Հայաստանի ընդարձակագոյն շրջանում տեղի ունեցած ճանապարհորդութիւններն ու հետազոտութիւնները. առաջին գրքի բովանդակութիւնն է ռուսական և պարսկական Հայաստանը, երկրորդ գրքին՝ այն երկրները, որոնք աշխարհագրական և պատմական սահմանագծերն էին կազմում Հայաստանի և Միջագետքի միջև և թէ հնագոյն և թէ ավելի ուշ ժամանակներում—ինչպէս Սալդերի և ասորեստանցիների, նոյնպէս և հոմայեցիների և պարթևների միջև—բուռն կովի առարկայ են եղել. այդ շրջանին կապակցված են Հայաստանի Արևմտեան և հիւսիս արևմտեան կողմերը: Սաղական երկրում ռուսաց ձեռքով գտնված արձանագրութիւնների բավարարութիւն տվող ամբողջ ժողովածուն հրատարակել է Նիկոլսկին: Այդ երկրներում անցեալի վկաներն ու պրօբլէմները առավելապէս նախախաղական ասորական և կլասիկական ժամանակաշրջաններին են վերաբերում: Հարկավ Ռուսաստանը ավելի մեծ թվով խալդական սեպագիր արձանագրութիւններ ունի, որ շատ լավ մշակել և հրատարակել է Նիկոլսկին: Սակայն և այնպէս այստեղ միայն շատ քիչ, թէև կարևոր խալդական արձանագրութիւններ են նկատողութեան առնվում, մինչդեռ ասորական բեռագիր արձանագրութիւնները գիտնականօրէն մշակվել և հրատարակվել են իմ «նիւթեր Հայաստանի և Միջագետքի հնագոյն պատմութեան» աշխատութեան մէջ (տպված Abhandlungen der königlichen Gesellschaft der Wissenschaften zu Göttingen IX No. 3, 1907):

Կլասիկական ժամանակաշրջանի համար տասնադար յոյսերի նահանջի որոշ հատվածների հետ միասին ամենից հետաքրքրականն է Տիգրանակերտի տեղի որոշումը: Այդ է պատճառը, որ այս հատորի երկրորդ վերնագիրն է՝ «Կովկասից—Տիգրիս և Տիգրանակերտ»:



ՀՀ Ազգային գրադարան



NL0415860

10.977

